№ 20—ՏԱՍՆԵՒԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№ 20

1894 ՓԵՏՐՎԱՐԻ 18 (2 Մարտի) ՈՒՐԲԱԹ

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.
Առանձին համարը 7 կոպէկ։
Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և կենտրոնական գրավաճառանոցում։
Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ". կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang".

Խմբագրութիւնը բաց է ամեն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)։
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԿԱԽԵԹՈՒ ԱՅԳԵՏԷՐԵՐԻ
ՆՈՐԱԿԱԶՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
յառաջ նպատակ ունենալով տեղական և ներքին Ռուսաստանի շուկաներին մատակարարել բացառապէս Կախեթու բնական գինիներ ընկերութեան խաղողի այգիներից, սկսել է իւր գործունէութիւնը այս տարւայ փետրվարի 4-ից։
Էքսպորտի, պարտիայով և շշերով առևտուրը կատարվում է ընկերութեան պահեստներում և խանութներում, որոնք գտնվում են. 1) Միքայէլեան փողոցի վրայ, Սլիվիցկու տանը; 2) Երևանեան հրապարակի վրայ, Թամամշեանի քարվանսարայում։ (10—4)

Ներկայ փետրվարի 20-ին, կիրակի օրը, օծուելու է Գորու գաւառի ԱԽԱԼՔԱԼԱՔ գիւղի
ՆՈՐԱՇԷՆ ԵԿԵՂԵՑԻՆ,
որ կառուցել են նոյն տեղի Յովհաննէս աւագ քահանայ և իւր եղբայր գալուստ Տէր-Գալստեանները։
Ս. Օծութեան հանդէսը կը կատարէ Գեր. Գէորգ եպիսկոպոս Սուրէնեանը։ (2—2)

„ԱՐՁԱԳԱՆՔ"
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐԸ
1894 ԹՈՒԻՆ
«Արձագանքը» լոյս է տեսնում շաբաթը երեք անգամ—չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
«Արձագանքի» տարեկան գինը 10 ռ. է, կէս տարուանը—6 ռ., երեք ամսուանը—3 ռ., մի ամսուանը—1 ռուբլի։
Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը (Վելիամինովսկի փողոց, № 22, տուն Խանդամիրեանի) և «Կենտրոնական գրավաճառանոցում»։
«Արձագանքին» օտար քաղաքներից գրուել ցանկացողները պէտք է դիմեն հետևեալ հասցէով. Тифлисъ, Редакція газеты „Ардзаганкъ", իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang».
Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն և թէ օտար լեզուներով։
Խմբագիր-հրատարակիչ՝ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վանքեր և վանականներ։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Վեհ. Հայրապետի կոնդակը Սանասարեանի մահարձանի առիթով։ Գիւղատնտես. ճեմարաններ բանալու պատրաստութիւններ։ Աշակերտներին երկ. ձրի տոմսակներ տալու համար նոր կարգադրութիւն։ Գնդապետ Լազարեանի տուած բողոքի հետևանքը։ Լուսաւորութեան նախարարութեան մի յայտարարութիւն։ Քաղ. վարկի ընկեր. վարչ. նախագահի ընտրութիւն։ Նամակ Ախալցխայից։ Նամակ Նոր-Նախիջևանից։ Նամակ խմբագրութեան։ Եղեսկայից։ Բագուից։ Մարգարխան Աւագեանի պարգևատրուիլը։ Խաղողի կորիզից ձէթ հանելու առիթով։ Կոմս Դելիանեան։ Բագուի բէշական "Նպր." տարեկան հանդէսը։ Հայ թատրոնի ապագան։ Պ. Ագուլինի նպաստ։ Միջազգային ցուցահանդէս գինեգործութեան վերաբերեալ։ Նոր ստացուած գրքեր։
ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ.—Լուրեր Կ. Պոլսի թերթերից։
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.—Նամակ Դավրէժից։
ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—«Թատրոն»։
ՖԵԼԻԵՏՕՆ. — Սիմէոն կաթողիկոսի կենսագրութիւնը։
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՆՔԵՐ ԵՒ ՎԱՆԱԿԱՆՆԵՐ

Հարևրաւոր հայ վանքերի անկումը և աւերումը այսօր մի տխուր պատմական փաստ է։ Ոչ ոք այս չէ հերքում, որովհետև աւերակների քարերն են խօսողը։

Այդ քարերը շատ բաներ են պատմում մեզ. այնքան դար անձայն և արտասուաւէտ քարակոյտեր լինելուց յետոյ, նրանք կենդանի լեզուով նկարագրում են իրենց ժամանակն ու անցած անցքերը։

Յայտնի է, որ հայոց պատմութեան մշակութեան նորագոյն շրջանը մեր դարումն է սկսուել. այդ շրջանն անհերքելի, արձանագրած փաստերի պատմութիւնն է, որ բըսկսուած Սարգիս եպ. Ջալալեանցից մինչև Հ. Ալիշանն ու պրոֆ. Մառը հետղհետէ ժողովւում և մթերւում է։

Այդ մի հարուստ պատմագրութիւն է, որ ցարդ անուշադիր էր մնացել և չնայելով ժամանակների ամենածանր տառամներին, աւերիչների վայրենութեան և տարբեր քանդող ազդեցութեան, դեռ ևս կենդանի վկայ է մեր անցեալի։

Հայ արձանագրութիւնների ժողովածուն կը լինի այն մեծածաւալ գիրքը, որ կը պատմէ հայ ժողովրդի անսուտ պատմութիւնը, նրա քաղաքակրթութիւնը։

Բայց մի՞թէ հայ վանքերի դերը միայն այդքանով պիտի վերջանայ, մի՞թէ հայ վանքերն այսօր մի այլ դեր չունեին կատարելու, քան թէ հայ ճարտարապետութեան օրինակ լինելու և հայ բարեպաշտների, հայ վանականների ու ժողովրդի անցածի մասին պատմելու։

Մենք առիթ ունեցանք ցոյց տալու՝ թէ ինչ է եղել հայ վանքը հընումն և ինչքան մեր եկեղեցին ու ժողովուրդը պարտական է վանքերին. այսօր կամենում ենք մի այլ խնդիր շօշափել, այն է՝ հայ վանքերի դերը այսօր, մեր ժամանակումը, երբ հայ եկեղեցու ամբողջ ղեկավարութիւնը վանական հոգևորականների ձեռքին է։

Հայ եկեղեցու Պետը, նրա աջակից եպիսկոպոսներն ու առաջնորդները, հայ եկեղեցու քարոզիչներն ու վարդապետներն ամենաքեան ևս կուսակրօն վանականներ են և պիտի լինին՝ թէ աւանդութեամբ և թէ օրէնքով։

Այս աւանդութիւնն ու օրէնքը յօգուտ հայ ժողովրդի ու հայ եկեղեցու է, որովհետև նրա հոգևոր մշակները, հոգևոր գանձերի պաշտպաններն ու պահապանները աշխարհիկ առէջնէ պէտք չէին, և բոլոր ուրացել էին աշխարհն ու իրենց անձը։

Եթէ հայ եկեղեցու նախանձախնդիրների համար թանգ էին մեր հայրենաւանդ դաւանանքը, սրբութիւնները, հայ ժողովրդի կրօնական - բարոյական կրթութիւնը, նրանք օր առաջ պիտի կործանումից փրկեն արդէն իսկ քայքայուած վանքերը։

Հարևրաւոր աւերակների մէջ այսօր մի քանի մեծանուն վանքեր են կանգուն մնացել. եթէ դրանք գոնէ փրկուէին և մեր անտարբերութեան շնորհիւ չամայանային, կարող էին առ ժամանակուայ ապաստանարաններ լինել հայ վանականութեան։

Հայ վանական միաբանութիւնները վերացել են, հայ եկեղեցականութեան ընտրելագունի ապագան վտանգի է ենթարկուած, դարման է պէտք օր առաջ։ Եթէ վանքեր և վանական միաբանութիւններ չունենք, որտեղից պիտի առնենք վարդապետներ, քարոզիչներ, առաջնորդներ և եպիսկոպոսներ։ Մի՞թէ սորանով վտանգ չէ սպառնում եկեղեցուն։

Գիտենք, որ կան այս չարիքը հասկացող եկեղեցականներ, որոնք իրենց ձեռքից եկածը չեն խնայում վանքերի համար, ինչպէս որ Ճամախու թեմակալ սրբ. Մեսրոպ եպիսկոպոսը, որ նորոգեց Սաղիանու վանքը, արժանապատիւ Պօղոս վարդապետը, որ վանական կալուածների ախոյեան է, սակայն այս անհատների ջանքը անբաւարար է, պէտք է աւելի մի զօրաւոր միջամտութիւն։

Վեհափ. Հայրապետը Ս. Էջմիածին ոտք դնելու օրուանից սկսած մինչև այսօր քանիցս կրկնել է, որ իրեն օգնականներ են պէտք, «ժողովրդին քարոզող վարդապետ չունիմ», ասաց նա Երևանում, «կծկուած ձեռներով են նստում իմ դիմացն», ասաց նա իւր անուանակոչութեան տօնին, ինչ կրնայ ընել մի մարդ», քանիցս կրկնեց ժողովրդասէր հայրիկը։

Այս իսկ խօսքերը ասհաւատչեայ են, որ մեծ է ճգնաժամը, ուստի դարմանն էլ շուտափոյթ պիտի հասցնել։ Բայց ինչպէս ծաղկեցնել, կործանումից ազատ պահել վանքերը, ինչպէս նորոգել վանականութիւնը։

Այդ մասին մի այլ անգամ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մեզ հաղորդում են, որ Նորին Սրբութիւն Վեհափառ Կաթողիկոսը իւր հայրապետական կոնդակով, որ արդէն ստացուել է Թիֆլիզի հոգևոր կոնսիստորիայում, հրամայել է թոյլատրել Մկրտիչ Սանասարեանի կըտակակատարներին, նոցա ներկայացրած նկարի համեմատ, մահարձան կառուցանել հանգուցեալ բարեգործի շիրիմի վերայ Վանքի աւագ եկեղեցւոյ գաւթումն։ Յայտնի է, որ տեղակալութեան ժամանակ կտակակատար պ. Կ. Եզեանցը մերժում ստացաւ Ս. Էջմիածնայ սինօդից յիշեալ նկարին համեմատ մահարձան կանգնեցնելու «Կարնոյ Սանասարեան վարժարանի հիմնադրի» գերեզմանի վրայ։

* * *

Մոսկվայի գիւղատնտեսական ճեմարանի բացուելուց յետոյ, որ տեղի կունենայ այս տարուայ աշնանը, նախապատրաստութիւն է տեսնուելու՝ ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, Կիևում և մի քանի այլ քաղաքներում համանման ճեմարաններ հաստատելու։

* * *

Աչքի առաջ ունենալով, որ շատ անգամ դանգատներ էին լսվում այն դպրոցական աշակերտներից, որոնք երկաթուղիներով ճանապարհորդում են արտօնութիւն վայելող տոմսակներով՝ թէ իրենց տոմսակներ տրվում են ոչ միևնոյն այլ հետևեալ օրը, երկաթուղիների դեպարտամենտը կարգադրութիւն է արել աշակերտներին տոմսակ տալ այն գնացքներին և այն ժամանակ, երբ նոքա պահանջում են, որի մասին աշակերտները պէտք է յայտնեն գնացքի մեկնելուց կէս ժամ առաջ։

* * *

«Արձագանք»-ի ընթերցողներին յայտնի է, որ պաշտօնաթող գնդապետ Յակոբ Դ. Լազարեանը դատի էր կոչել երդուեալ հաւատարմատար Գ. Եւանգուլեանցին, մեղադրելով, որ նա իւր ճառի մէջ, որ արտասանած էր դատարանում ի պաշտպանութիւն Նախիջևանցի Սարգիս քահանայ Օրբէլեանցի, անպատուել էր պ. Լազարեանցին։ Թիֆլիզի նահանգական դատարանը, անցեալ յունվարի 8-ին, քննելով գնդապետ Լազարեանի գանգատը, ընդունեց, որ պ. Եւանգուլեանցը չէ անպատուել գանգատողին։ Այժմ լսում ենք, որ պ. Լազարեանը նահանգական դատարանի վճռի դէմ բողոքել է դատաստանական պալատին և որ իւր բողոքի մէջ թոյլ է տուել անպատուելու դատարանը, որ արդարացրել է պ. Եւանգուլեանցին, զանազան անվայել դիտողութիւններ անելով դատաւորների մասին և կասկածելով նոցա անկողմնապահութեան վրայ։ Նահանգական դատարանը, ի նկատի առնելով յիշեալ բողոքի մէջ տեղի տուած անպատուութիւնը, ամսոյս 1-ին, որոշել է՝ դատի կոչել պաշտօնաթող գնդապետ Յակոբ Լազարեանցին, մեղադրելով նորան քրէական օրէնքի 283 յօդ. նախատեսուած յանցանքի մէջ։ Գործը արդէն յանձնուած է պրօկուրորի միջնորդութեամբ դատական քննիչին։

* * *

Ազգային լուսաւորութեան նախարարութիւնը պաշտօնապէս յայտարարում է, որ ներկայ տարուայ սեպտեմբերի առաջին կիսին Բուդապեշտում գումարուելու է առողջապահութեան և ազգագրութեան մի միջազգային ժողով։ Այն անձինքը, որոնք ցանկանում են մասնակցել յիշեալ ժողովին, պէտք է դիմեն հարկ եղած տեղեկութիւններն ստանալու համար քարտուղար պրօֆեսոր Կօլօման Միւլլէրին (Koloman Müller) հետևեալ հասցէով Budapest, S-t Rochusspital։

* * *

Իշխան Ն. Ամատունու հեռանալուց յետոյ թափուր մնացած նախագահական բազկաթոռը քաղաքային վարկի ընկերութեան մէջ՝ այնքան անձանց մէջ ջերմ փափագ է ծագեցրել այդ բազկաթոռի վրայ բազմելու, որ իրեն աթոռին վտանգ է սպառնում թեկնածուների միաժամանակ նստելու փորձերից բոլորովին կոտրուելու։ Հաւանական վերջն այն կը լինի, որ կոտրած աթոռի փոխարէն մի նոր նստարան կը շինուի, իսկ թէ ո՞վ պէտք է բազմեցնեն դորա վրայ, անշուշտ ընդհանուր ժողովի անդամներից հարցնող չի լինի։

Աճա այս կիւրակէ նշանակուած է վարչութեան նախագահի ընտրութիւն։ Ինչպէս լսվում է քուէարկուել ցանկանում են պ. պ. Պ. Գուրգէնբէգեան, Ա. Ղորղանեան, Լ. Մգեբրեան, Մ. Միրզոյեան, Ռ. Մանգինեան, Խ. Վերմիշեան և բժ. Քուչարեան, ճիշդ 7 մարդ։ Մարդակամայ յիշում է ռուսաց առածը, թէ՝ «7 պահողի ձեռքում վերջ ի վերջոյ երեխայի աչքը կը հանուի», այն էլ այնքան երես տուած երեխայի։ Սակայն կիւրակի օրուայ ընդհանուր ժողովի անդամներին վիճակուած է այնքան հոգեշահ զեկուցումներ (Պալտովի քննութիւն և այլն) լսելու, որ հազիւ թէ ընտրութիւններ անելու ժամանակ գտնեն։

* * *

ԱԽԱԼՑԽԱ, 14 փետրվ.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Երէկ երկրորդ անգամը ժողով էր նշանակուած հոգաբարձ. պատգամաւորների ընտրութեան համար։ Ժողովը այս անգամ էլ չկայացաւ, որովհետև կանոնադրութեամբ պահանջող ցուցակագրուածների 1/5-ը ներկայ չէր ժողովին։ Ժողովականների օրինական թիւը ներկայ չլինելու պատճառով ընտրութիւնը ղեկավարող արժ. Հ. գործակալը յայտնեց ժողովին, որ կանոնադրութեան համաձայն ժողով չէ կարող կայանալ, փակեց ժողովը և աւելացրեց նաև այն, թէ որովհետև այդ ժողովը երկրորդ անգամն է և ժողովականների օրինական թիւ չէ ներկայացել ընտրութեան համար, ուստի կրկին անգամ ժողով գումարելու իրաւունք չկայ. կանոնադրութեան համաձայն պէտք է այդ մասին տեղեկացնել սրբազան առաջնորդին և նրա տնօրինութեանը թողնել։ Ժողովականներից մինը—պ. Ա.-ը, Հ. գործակալից խօսք խնդրելով, միանգամայն իրաւացի կերպով նկատեց, թէ ծխատէր քահանաների ցուցակագրուածներից շատերը չեն ստորագրել հրաւիրաթերթերին, հարկաւոր է ցուցակներն ստուգել։ Կանոնադրութեամբ պահանջւում է, որ ծխականները ժողովի կանչուեն հրաւիրաթերթերով, նրանց բոլորի ստորագրութիւնը լինի հրաւիրաթերթերի վրայ, իսկ այդ չէր եղած, շատերի ստորագրութիւն չկար հրաւիրաթերթերի վրայ. պարոնը բողոքեց դրա դէմ և ժողովի ուշադրութիւնը հրաւիրեց այդ երևոյթի վրայ ու ասաց, որ թերևս այդ պատճառով էլ ժողովը չէ կայանում. ժողովը չկայանալու պատճառներից մինն էլ պարոնը համարում էր վերջերքս մեզանում անընդհատ տեղացող ձիւնը, որ չտեսնուած մի բան էր Ախալցխայում, ուստի առաջարկեց ժողովը չեղած համարել վերոյիշեալ հիմունքների վրայ։ Նոյն կարծիքին էին և ուրիշները։ Պարոնի առաջարկութեան առիթով փոքր ինչ վիճաբանութիւն տեղի ունեցաւ, թէր և դէմ կարծիքներ է ... յայտնուեցան, ի մասնաւորի ենք ասում, որովհետև պարոնի առաջարկութիւնը ժողովի լուրջ խորհրդածութեան նիւթ չդարձաւ։ Հ. գործակալը նկատեց նրան, թէ ընտրութեան մասին իր ժամանակին ծանուցումներ եղած են քաղաքիս բոլոր եկեղեցիներում, ցուցակներ ստուգելու կարիք չկայ. անցեալ կիւրակին արդէն ժողով էր նշանակուած, ամբողջ քաղաքին էլ յայտնի էր ընտրութեան օրը, իսկ եթէ ծխականներից պատահաբար մի քանիսը չեն ստորագրել հրաւիրաթերթերին, դրան էլ մի առանձին նշանակութիւն չպիտի տալ, որովհետև դա իրանից չէ եղել, այլ հրաւիրաթերթերը ման ածողների անփոյթութիւնից է առաջ եկել։ Հարցը դեռ չպարզուած՝ ժողովը չըկայանալու մասին կազմած արձանագրութեան տակ ժողովականները սկսեցին ստորագրել և փոքր առ փոքր ցրուել։ Պ. Ա.-ը ստորագրեց նոյն արձանագրութեան տակ և իր դիտողութիւնը գրի անցրեց այնտեղ։

Պ. Ա.-ի այն կարծիքը, թէ ժողովը չկայանալու պատճառը ծխականներից շատերի հրաւիրաթերթերին չստորագրելը և կամ անընդհատ տեղացող ձիւնը թերևս կարող էր լինել, մենք չենք ընդունում. ժողովը չկայանալու պատճառը ոչ այս է և ոչ այն. մեր կարծիքով, դրա պատճառը ոչ այլ ինչ է, բայց եթէ ժողովրդի մեռելութեան հասցրած անտարբերութիւնը դէպի հասարակական գործերը. իսկ ինչ վերաբերում է նրան, թէ այդ օրէնքի տեսակէտից սխալ է և անկանոն, դրա դէմ ոչինչ չունինք ասելու, միանգամայն համաձայն ենք։ Ասածիս իբր ապացոյց առաջ եմ բերում դպրոցական կանոնադրութեան հատուածը.—«Աւուրբք ինչ յառաջ փոխանորդք կամ գործակալք տան կազմել ընդ ձեռն ծխատէր քահանայից այնր եկեղեցւոյ՝ յորոյ անուն բացեալ լինի ուսումնարանն, ցուցակս ծխականաց իւրեանց, հասելոց ի չափ ամաց՝ ոչ պակաս քան զ25, ապա ծանուցմամբ յեկեղեցւոջ և առանձին հրաւիրակաւ ընտրողս կոչին ցուցակագրեալ ծխականքն յընտրութիւն պատգամաւորաց»։

Առաջ բերածս հատուածից պարզապէս երևում է, որ ընտրութեան մասին չպէտք է շատանալ եկեղեցիներում ծանուցում անելով, այլ և հրաւիրաթերթերով էլ պէտք է ժողովի կանչել ծխականներին։ Հայր գործակալի պարտաւորութիւնը պիտի լինէր խստիւ պատուիրել հրաւիրաթերթերը ման ածողներին բոլոր ծխականներին ստորագրել տալու, իսկ այդ չէ արուել, հետևապէս կանոնադրութիւնից շեղում է եղած։

Փետրվարի 13-ին նշանակուած ժողովը չեղած պէտք է համարել, ապա ուրեմն և հարկաւոր է մի նոր ժողով գումարել պատգամաւորների ընտրութեան համար։

Վր.

* * *

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

Պ. Խմբագիր.

Ներողութիւն կրէք յայտարարելու Ձեր պատուական լրագրի էջերում յօգուտ Գամառ-Քաթիպայի մահարձանի նուիրատուողների ցուցակը. Կ. Զօլօթարեան 3 ռ., միջնորդութեամբ առ. քահ. Տուրփայեանի Մօզդօկից 7 ռ. 50 կ., Վ. Ախչեան 10 ռ., Ջաքաթալից միջնորդութեամբ «Արձագանքի» 22 ռ. 40 կ., Կ. Մ. Ճապոշնիկեան 25 ռ., Գր. Բախչեսարայցեան 5. և միջնորդութեամբ Պ. Թ. Հալլաճեանի—75 ռուբլի (հինգհինգ ռուբլի՝ Պ. Հալլաճեան, Կ. Խաբախբաշեան, Մ. Ճաբշնիքեան, Ե. Ճաբշնիքեան. երեք-երեք ռուբլի՝ Գ. Ք. Ջաքարեան, Ա. Մամիկոնեան, Պ. Պետրոսեան, Մ. Նազարեան, Կ. Մելիք-Փաշթեանց, Ա. Ճապովալեան, Փ. Աղաճանեան, Հ. Աստուածատուր, Գ. Խոճնազարեան, Կ. Քաժեվնիքեան, Կ. Քէշէճեան, Կ. Աշրաֆեան, Կ. Բաշմաքեան, Մ. Խըրլեան. մէ-մէկ ռուբլի՝ Գ. Այվազեան, Մ. Տրապիզոնցեան, Կ. Մեսնիքեան, Խ. Սահակեան, Կ. Դերզիեան, Ա. Խազաղեանց, Կ. Ճաբշնիքեան, Գ. Տալտապանեան, Դ. Ճահնարեանց, Ա. Քափիքեանց, Պ. Պոլովեան, Կ. Ամիրայեան, Խ. Խլէպնիքեան). ընդամենը—147 ռ. 90 կ.։ Ուրեմն նախ-

կին 435 ռ. 50 կ. հետ այժմ ունինք 583 ռ. 40 կ.։

Յօգուտ Ռափայէլ Պատկանեանի մահարձանի նուիրողները Թող դիմեն՝ Нахичевань на Д. присяжному повѣренному Г. Я. Чалхушяну.

Երդ. հաւ. Գ. Չալխուշեան։

1894 Թ. փետր. 5
Ն.-Նախիջևան

* * *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պ. Խմբագիր.

Խոնարհաբար խնդրում եմ Թոյլ տալ Ձեր յարգելի լրագրի մի անկիւնում զետեղել համառօտ հաշիւս՝ ի միամտութիւն այն նուիրատուների, որոնք՝ իւրեանց բնակութեան տեղերի հեռաւորութեան պատճառով չկարողացան ներկայ գտնուել հաշիւս տալու ժամանակ։

Անցեալ դեկտեմբերին և ներկայ Թուականի յունուարի սկզբին հանգանակուած է 246 ռուբ. սրանից 100 ռուբ. ուղարկել եմ յարգելի խմբագրութեանդ Ղալագէ գիւղի այրուած եկեղեցու վերաշինութեան համար, 25 ռուբ. հայերէն պարբերական լրագիրների խմբագրութիւններին, 1 ռ. 40 կոպ. փոստի ծախս։ Մնացեալ 119 ռ. 60 կոպ., տեղացի մի քանի երիտասարդների հետ ճրագալոյց երեկոյեան հաւաքած 101 ռուբ. և յունուարի 29 ին սարքած տօնածառի և պարի հանդէսներից գոյացած զուտ արդիւնք 52 ռ. 50 կոպ. ընդամենը 273 ռ. 10 կոպ. գումարը յանձնել եմ տեղիս ծխական հայոց ուսումնարանի հոգաբարձութեան՝ ուսումնարանի պահպանութեան համար։

Երէցփոխ Ալլէրէեանց։

8-ն փետ. 1894 Թ.
Ս. Խաչ քաղ.

* * *

ԵԴԵՍԻԱՅԻՑ մեզ գրում են. — Այսօր, փետրվարի 6-ին, մեծ հանդէսով կարդացուեցաւ տեղւոյս Ս. Աստուածածնայ եկեղեցում վեհափառ Հայրիկի անդրանիկ կոնդակը։ Քարոզեց արժ. Կարապետ քահանայ Վլասեանցը և ճառ խօսեց տեղական դպրոցի աւագ ուսուցիչ պ. Յարութիւնեանցը։ Մեծ էր ժողովրդի ոգեւորութիւնը. հետաքրքիր էր մանաւանդ տեսնել, Թէ ինչպէս ծխական դպրոցի սաները եկեղեցուց դուրս գալով, «կեցցէ Հայրիկ» գոչելով սկսեցին վազվզել։

Ժամերգութիւնը վերջանալուց յետոյ ծխական դպրոցի դահլիճում տեղի ունեցաւ հոգաբարձական ընտրութիւն։ Հաւաքուած էին ծխականներ Թւով 80։ Միաձայն ընտրուեցաւ նախկին հոգաբարձու պ. Կարապետ Միրանեանցը, իսկ անձնափոխանորդ նորա պ. Զաքարիա Եղիազարեանցը։

* * *

ԲԱԳՈՒԻՑ մեզ հաղորդում են. — «Մեր տաղանդաւոր դերասանուհի տ. Հրաչեան՝ հասնելով այստեղ՝ հասարակութեան կողմից ներկայացան նորան մեծ. պ. պ. Վ. Մութաֆեանցն ու Ս. Բաղիրեանցը և խնդրեցին յարգել Բագուայ հայ հասարակութեանը՝ մի ներկայացումն տալով։ Տ. Հրաչեան սիրով յանձն առաւ այդ առաջարկութիւնը և ամսոյս 22-ին, չորեքշաբթի օրը, տեղական հայ խմբի և պ. Աբրահամեանցի մասնակցութեամբ պիտի տայ Թաղիեվի Թատրոնում «Կամելիազարդ տիկին», որ ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, առանձին հմտութեամբ է ներկայացնում տիկինը։ Հասարակութեան զանազան դասակարգերից պատրաստւում են զանազան ընծաներ, ներկայացման օրը տալու։ Ներկայացման մանրամասնութիւնները կը գրենք իր ժամանակին»։

* * *

Թագաւոր Կայսրը Բարձրագոյն բարեհաճել է շնորհել պարսկահպատակ *Մարգար-խան Աւագեանցին—արծաթեայ մեդալ Ստանիսլաւի* ժապաւէնով կուրծքի վրայ կրելու։

* * *

Անցեալ համարում մենք հաղորդեցինք Թէ Բեսարաբիայի մեծ կալուածատէրներից մէկը փորձեր է արել խաղողի կորիզներից ձէթ հանելու և ստացել է 3-ից մինչև 12 տոկոսի ձէթ։

Այժմ մեզ յայտնում են որ ութսնական Թուերին պ. Լ. *Խան-Աղեանը* Էջմիածնում իւր *շոգեշարժ ձիթահանքում նմանապէս փորձեր է արել խաղողի կորիզներից ձէթ հանելու* և ստացել է 22 տոկոս ձէԹ։ Այդ ձէԹը գտաւ էր և ուտելու համար անպէտք և կարող էր մեծ յարմարութեամբ գործադրուել սապոն եփելու, վառելու և մեքենաներ իւղելու համար։ Բայց անկարելի եղաւ նրան հաւաքել մեծ քանակութեամբ գործադրելու համար։

* * *

«Գրաժդանինը» հաղորդում է, որ ազգային լուսաւորութեան նախարար կոմս Դելեանովը ինֆլուէնցայով է հիւանդացել։ Յետագայ բիւլետէնները հաղորդում են որ նորա առողջութիւնը հետզհետէ լաւանում է. հիւանդին այցելեց պրոֆեսոր Զախարինը, որ բժշկում էր կայսրին։

* * *

ԲԱԳՈՒՈՒՄ փետրուարի 13-ին կատարուել է այնտեղի ռէալական դպրոցի տարեկան հանդէսը։ Պ. վերատեսչի կարդացած հաշուից երեւում է որ 1-ն յունվարի 1894 Թուի այդ դպրոցում եղել է 542 աշակերտ, որոնք ըստ ազգութեանց բաժանւում են հետևեալ կերպով. ռուս 242 կամ 44,6%. հայ 164 կամ 30,3%. Թուրք 66—12,2%. հրեայ 22—4,1%. լեհական 9—1,6%. վրացի 6—1,1%. այլ ազգութիւններ 33—6,1%։

* * *

ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ԱՊԱԳԱՆ *)

Այս տարուայ ղեկավարութիւնը մի նոր դարաշրջան է հայոց Թատրոնի համար. նախ այն պատճառով որ երկու յարգելի անձնաւորութիւն վարուած լինելով հայրենասիրական զգացմունքով միանալով պ. Տէր-Նիկողոսեանի հետ, որ ահա երեք տարի շարունակ մասնակցում է գործին, առաջ են տանում իրենց անծանօթ գործը անօրինակելի առատաձեռնութեամբ և ամենայն բարեխղճութեամբ։

Թիֆլիզի հայ հասարակութիւնը որ միշտ գոչում էր տուէք մեզ Հրաչեային, Գարագաշին,—իր բաւականութիւնն ստացաւ—ղեկավարները չխնայեցին 600 ր. ամսական տալ առաջինին։ Բայց արի տես, որ Թատրոնը դարձեալ Մուղանի անապատի էր նմանում, ասել է որ հայերը վերջի յոյսը պէտք է կտրեն փրկարար Պօլսից. դերասանուհիք չեն գրաւում հասարակութեանը, մնում է այնտեղ պ. Մնակեանը, որին պէտք է հրաւիրել իբրև ռեժիսոր։

Դառնանք այդ կարևոր հարցին, այսինքն ռեժիսորի. եԹէ զինուորը առանց սպայի ոչինչ չէ կարող սովորել, եԹէ առանց ուսուցչի ուսումնարան չէ լինում, առանց դեկորացիաների բեմ, չէ լինում լրագիր առանց խմբագրի — ուրեմն ինչպէս կարող է լինել Թատրոնական խումբ առանց ռեժիսորի։ Դա ամենագործունեայ և անհրաժեշտ մեքենան է Թատրոնում. եւրոպական մեծ Թատրոններում առաջ քան խումբ կազմելը հրաւիրում են լաւ ռեժիսոր և յետոյ այդ վերջինին յանձնում կազմակերպել խումբը և դորա համաձայն և ռեպերտուարը։ Ռեժիսորը պէտք է լինի լաւ զարգացած մարդ, շատ հմուտ Թատրոնական գործին, լաւ ծանօԹ եւրոպական ռեպերտուարին —գլխաւորը իր գործին նուիրուած մարդ։ Անշուշտ այս պահանջներով շատ դժուար է գտնել հայոց Թատրոնի համար ձեռնհաս ռեժիսոր։ Ռուսաց խմբերը, որոնց Թիւը հարիւրների է հասնում, ունին միայն 10—15 ռեժիսոր։ Ուրեմն ինչ պէտք է արած, քանի որ հայերս չունինք լաւ ռեժիսոր, առանց որի ոչ մի խումբ չէ կարող առաջ գնալ։ Վերև յիշեցի որ պ. Մնակեանը մի ընտիր ռեժիսոր է. ուրեմն ում ձեռքին էլ լինի ապագայ Թատրոնի ղեկը—պէտք է աշխատէ հրաւիրել նորան, գուցէ կարողանայ առաջ տանել մեր խումբը։ Որ ընդունակ և տաղանդաւոր մարդիկ կան մեր դերասանների մէջ, անհերքելի է. բայց շատերը աւելի առաջ կը գնային հմուտ ռեժիսորի ձեռքի տակ։ Լամբրօզօն ապացուցանում է, որ տաղանդները ձեռք են բերվում, իսկ հանճարները ծնվում. ուրեմն եԹէ տաղանդը կարելի է ձեռք բերել աշխատութիւնով, անպատճառ պէտք է այդ աշխատութեան ղեկավարող լինի։ Առանց աշխատանքի, զարգացման ոչ մի տաղանդ չէ փայլել։ Յիշեցէք հանգուցեալ Ադամեանին, ինչպէս էր վերջին տարիները հանգուցեալը պարապում, շատ գիշերներ էր լուսացնում։ Բացի պ. Մնակեանից—ռեժիսորի պաշտօնը կարող էին յանձն առնել դարձեալ երկու մարդ իբրև amateure-ներ. մէկի անունը չենք տալիս, որովհետև հաղիւ Թէ ձեռնհասու լինի գործին, իսկ երկրորդը մեր յարգելի Գր. Փրիդոնեանն է, որ շատ լաւ ծանօԹ է Թէ եւրոպական ռեպերտուարին, Թէ Թատրոնին և Թէ դերասանների բնաւորութեան, քաջ ծանօԹ է ֆրանսիական լեզուին և միշտ յետևում է Թատրոնական գործին։

Ռեպերտուարը ամենամեծ ցաւն է մեր Թատրոնի Թէ պիէսների ընտրողութեան վերաբերմամբ Թէ լեզուի կողմանէ (Թարգմանութեան)։ Երևակայեցէք, սիրելի ընԹերցող, եԹէ կը տաք մի որևէ մելօդրամա, լրագիրները միաբերան կը սկըսեն գոչել. «ա՛, դուք մելօդրամա էք առաջարկում ժողովրդին՝ ֆրանսիական խոհանոցից». կը տաք մի՞ որևէ լաւ դրամա. «ձեր ինչ գործն է, պարոններ, որ դուք համարձակվում էք խաղալ այդպիսի դրամա». կը տաք ժամանակակից լաւ պիէսներ. «ա՛, դուք մեզ ծանօԹացնում էք եւրոպական անբարոյական պիէսների հետ, որոնք հետևանք են Զօլայի ուղղութեան» և այսպիսի բաներով կը սկըսեն քարկոծել ձեզ. կը տաք մեր հռչակաւոր Գ. Սունդուկեանի պիէսները, Թատրոնը դատարկ է. կը տաք մի քանի ունեցած ազգային պատմական պիէսներից—գոռոց, հայհոյանք ամենայն կողմից։ Բայց տեսէք որ ժողովուրդը այդ վերջիններն է սիրում և ուրիշ տեսակ չի էլ կարող լինել. միԹէ հայոց Թատրոն յաճախող մեծամասնութիւնը կարող է հասկանալ «Ուրուականներին», «Պատիւ»ի «Հայրենիքի» և «Շտոկմանի» գաղափարները։ Այս տողերը գրելով չեմ ուզում ասել որ ժողովուրդին պէտք է տալ մելօդրամներ կամ ազգային անիմաստ պիէսներ. քա՛ւ լիցի. Թատրոնի նպատակն է ժողովրդի ճաշակը զարգացնել, և իմ կարծիքս այն է որ տեղային ոյժերով միմիայն կարելի է տալ Թեթև կօմեդիաներ և վօդեվիլներ. կօմեդիաները մեծաւ մասամբ պէտք է փոխադրուեն և ոչ Թէ Թարգմանուեն։ Այդ ուղղութեանը յետևում է վրաց Թատրոնը և աւելի յաջողութիւն ունի քան Թէ մերը, Թէպէտ մեր Թատրոնի ոյժերը բարձր են վրաց ոյժերից։ Ռեպերտուարը ամենաանհրաժեշտ և գլխաւոր բանն է Թատրոնական գործում. և լաւ ընտիր ռեպերտուար ձեռք բերելու համար չպէտք է խնայել ոչ փող, ոչ աշխատանք. Պէտք է առաջարկել լրագիրների միջոցով որ Թարգմանութիւնները և փոխադրութիւնները կը վարձատրուեն ըստ արժանւոյն և ես հաւատացած եմ որ շատերը այն ժամանակ կը նուիրեն իրանց այդ գործին։

Վերջացնելով յօդուածս պէտք է ասեմ, որ լրագրութիւնն էլ արդարութեամբ չէ վերաբերվում հայկական Թատրոնին և դերակատարներին. լաւ ներկայացումների առԹիւ կարծես դիտմամբ լռում է, իսկ մի փոքր անյաջող ներկայացումների վերաբերութեամբ սաստիկ աղմուկ հանում։

ԵԹէ հայերը ուզում են Թատրոն ունենալ միւս սեզոնի համար, ամենայարմարն է միանալ բաժնետէրների հետ և մի խումբ պահել (ինչպէս անցեալ տարի պ. Պետրոսեանն առաջարկում էր անելու), և այդ խումբը պէտք է կազմակերպուի այժմեանից մինչև Զատիկ։ Յետոյ համաձայն դոցա ոյժերին պէտք է ընտրուեն պիէսներ, փոխադրուեն, Թարգմանուեն, այդ վերջինները խմբագրուեն մի լեզուով, մի բարբառով—որ Բաբելոնեան խառնաշփոԹութիւն չլինի. հրաւիրել պ. Մնակեանին իբրև ռեժիսոր և օն անդր յառաջ։ Թող բագուցիք մի երկու մարդ ընտրեն, բանակցեն Թիֆլիզեցոց հետ և մենք հաստատ կարող ենք ասել որ գործը առաջ կըգնայ. միայն պէտք է պ. պ. դերասանները և դերասանուհիք հեռացնեն իրանցից անարժան անդամներին, ձեռք ձեռքի տան գործը ազնուութեամբ առաջ տանելու, իսկ փող տուողներ և խրախուսողներ կըգտնուին, վհատուելը — արժանի չէ մեզ։

Հին դերասան։

*) Տես «Արձագանք» № 17.

* * *

Պ. ԱԳՈՒԼԻՆԻ ՆՊԱՍՏ

Այսօր, ամսոյս 18-ին, արքունական Թատրոնում պիտի կայանայ Թիֆլիզի օպերայի առաջին տենօրի պ. Ագուլինի բենեֆիսը։ Կը ներկայացնուի Fra-Diavolo Օբերի։ Պ. Ագուլինը չունի, իրաւ է, այն՝ Թատրոնը դղրդեցնող, պատերը ճայԹեցնող հսկայական ձայնի ուժը, որպիսին Թիֆլիզցիք սովոր են և սիրում են լսել, սակայն նա ունի մի շատ գերազանց յատկութիւն, որ երաժշտութիւնը հասկացող ու զգայուն հանդիսականի համար վերին աստիճանի գրաւիչ ու յանկուցիչ է. այդ նորա՝ եԹէ կարելի է ասել [illegible] երգելու ընդունակութիւնն է։ Պ. Ագուլինի ձայնը երաժշտական աշխարհում ընդունուած է կոչել տէնօր միջին տեսակի (tenore di mezzo carattere) և հէնց այդ է, որ նրան ընդունակ է դարձնում երգել միակերպ յաջողութեամբ Թէ դրամատիքական (Ռաուլ, Էրնանի, Վասկօ-դէ-Գամա) և Թէ լիրիքական (Ֆաուստ, Մանտուայի դուքս, Ալֆրէդ Դերմօն, Ֆրա-Դիավօլօ) դերեր։

Պ. Ագուլինը արդէն լիովին գրաւել է Թիֆլիզի հասարակութեան համակրութիւնը Թէ իւր գեղեցիկ, Թարմ և քաղցրահնչիւն ձայնով ու հմուտ շկօլայով, և Թէ իւր մտածած ու կենդանի խաղով, մանաւանդ հասարակութեան այն մասի, որ երգչի արժէքը չէ փնտռում ահագին աղմուկի, գոռում գոչումի մէջ։ Մեր երգիչը միանգամայն արժանի է հասարակութեան Թէ բարոյական և Թէ նիւԹական վարձատրութեան։ Այլ և. իբրև մարդ՝ մի շատ համեստ և ազնիւ երիտասարդ է պարոնը։ Յոյս ունինք, որ Թիֆլիզի հասարակութիւնը ըստ արժանոյն կը գնահատէ իւր երգչին։

Յ. Լ.

* * *

Բաթումի իտալական հիւպատոսը ազդարարում է, որ այս տարուայ մայիս ամսին *Միլանում բացուելու է միջազգային ցուցահանդէս գինեգործութեան վերաբերեալ մեքենաների*։

* * *

Բժշկապետ Գրիգոր Քուչարեանցը հրատարակել է այս օրերս իր չափաբերական գրուածքների ժողովածուն՝ «Մխիթարանք և հանգիստ» վերնագրով և դրամատիկական էտիւդ, որ կրում է մի «Մեղապարտ փարիսեցիներ» վերտառութիւնը և բաղկացած է հինգ պատկերից։ Երկու գիրքն էլ մեծ խնամքով տպագրուած են պ. Յ. Մարտիրոսեանի տպարանում։ Առաջին գրքի գինը 30 կոպէկ է, իսկ երկրորդինը 20 կոպէկ։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

* * * «Պետերբուրգսկիա Վեդոմոստի» լրագիրը քննում է մի կարևոր խնդիր, որ մեզ համար ևս մեծ նշանակութիւն ունի, այն է Թէ ներքին գործոց նախարարի հրատարակած զեկուցման համաձայն, ինչ արդիւնքներ է ունեցել զինուորագրութիւնը 1893 Թուին.

«Զեկուցումից երևում է,—ասում է լրագիրը,— որ 21 տարեկան հասակ ունեցող և զինուորագրութեան ենԹակայ անձինքների Թիւը այս տարի 680,000 էր, իսկ ծառայութեան ընդունուած են 260,000 մարդ։ Առանձին ուշադրութեան արժանի է այն փաստը, որ ծառայութեան համար անպէտք և կասկածաւոր ճանաչուածների Թիւը 1893-ին կազմում է 150,000 հոգի, այսինքն զինուորագրութեան կոչուածների աւելի քան 20 տոկոսի»։

Լրագիրը ամենայն իրաւամբ ահագին նշանակութիւն է տալիս այն փաստին, որ զէնք կրելու անընդունակ երիտասարդների Թիւը տարէցտարի աճում է.

«Պէտք է ի նկատի առնենք մանաւանդ այն հանգամանքը, որ այն պահանջները, որ դնում են զինուորագրութեան

ՖԵԼԻԵՏՕՆ

ՍԻՄԷՕՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ *)

Բ.

ՏՈՀՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ։

Առաջին խնդիրը, որ հանդիպում է մեզ երջանկայիշատակ Սիմէօն կաթողիկոսի կենսագրութիւնը գրելիս՝ նորա տոհմաբանութիւնն է։ Սիմէօնի, ինչպէս և գրեԹէ բոլոր մեր նշանաւոր մարդկանց ազգաբանութիւնը խաւարով է ծածկուած։ Թէ ինչ տոհմից է նա սերուած՝ այդ մասին ոչինչ տեղեկութիւն չենք գտնում այն յորդառատ տպագիր ու ձեռագիր աշխատասիրութեանց էջերում, որոնց մէջ հատ ու կտոր տեղեկութիւններ կան գրուած Սիմէօն կաթողիկոսի գործունէութեան մասին և որոնց տուած կենսագրական ծանօթութիւնները վերաբերում են բացառապէս նորա կաթողիկոսութեան շրջանին, որ ինչպէս մի լուսաւոր կէտ փայլում է մեր վերջին դարերի պատմութեան էջերում։

Մի աղօտ յիշատակութիւն կայ միայն նորա ազգաբանութեան վերաբերեալ. իշխան Գէորգ (Եգոր) Խուբեանցը (Խուբով) Հայաստանի երեսնամեայ անցքերի նկարագրութեան նուիրուած իւր մի աշխատութեան [1]) սկզբում պատմելով իւր կենսագրութիւնը՝ յիշում է, որ «'ի Տէր հանգուցեալ՝ ամենայն հայոց Սիմէօն կաթողիկոսը իւր հօրեղբայրն էր (дядя)». այդ խօսքերից պէտք էր եզրակացնել, որ Սիմէօն կաթողիկոսն ևս Խուբեանց ազգից էր։ Նոյնը նա կրկնում է իւր մի ուրիշ աշխատութեան մէջ [2])։

Սակայն ուրիշ հաւանական ենԹադրութիւններ կան, Թէ Խուբեանց ազգանուան ծագումը մէկ դարու հնութիւն անգամ չունի և ուրեմն չէր կարող գոյութիւն ունենալ նոյն իսկ Սիմէօն կաթողիկոսի կենդանութեան ժամանակ։

Խուբեանց ընտանիքի՝ ներկայումս ապրող արժանաւոր ներկայացուցիչներից մէկը մեզ այնպիսի գրաւոր աւանդներ է յանձնել, որ եԹէ նոցանով դատենք՝ Սիմէօնը, Թէպէտ արդարև իշխանական, բայց բոլորովին այլ ծագումից պէտք է լինի սերուած։ Այդ անձը այրի Մարիամ Խուբեանցն է, Սիմէօն կաթողիկոսի եղբօր Թոռան՝ Յովհաննէսի ամուսինը. Նա պատմում է, Թէ իւր ամուսնու իսկական ազգը Խուբեանց չէ եղած, այլ իւր ծագումն առնում է ուղղակի Պռօշ հայկազն իշխանից, որպիսի ազգանուամբ կոչուել են նոքա մինչև դարուս սկզբները և Թէ, իրանց ինչ ցեղից սերուած լինելը արձանագրուած է Գեղարդայ վանքի դրան ճակատին։

Յիշեալ տիկնոջ պատմածներից և մեր ժողոված այլ տեղեկութիւններից երեւում է, որ դարուս սկզբներին Այրարատեան դաշտի տիրապետութեան համար մղած ռուս պարսկական պատերազմից յետոյ՝ Սիմէօն կաթողիկոսի եղբայր Մելքիսեդեկի որդի Գէորգը, որ իրան Պռօշեանց էր անուանում, գնում է Պետերբուրգ, ուր մտնում է արքունի ծառայութիւն. ռուսները նորա ազգանունը Թարգմանում են ռուսերէն և Պռօշ ենցը դառնում է Губ-овъ (Գուբ-ով. պռօշ՝ շուրԹն=ռուսերէն Թարգմանւում է губъ), որ հետզհետէ աղաւաղուելով՝ դառնում է *Ղուբով*, ապա *Խուբ-ով*, ըստ հայկական վերջաւորութեան՝ *Խուբեանց*։

Մեր ձեռքին է այժմ Խուբեանց ազգի մի անդամ՝ Աղաֆօնի պետական աստիճան ստանալու մի տպած հրովարտակ և Յովհաննէս բ. Կարբեցի կաթողիկոսի՝ 1832 Թ. յունիսի 10-ին «ազնիւ ազայ Կարապետ Ղուպովին» գրած մի կոնդակ, որոնց մէջ երկուսն էլ յիշուի անուանւում են «Գուբով» և «Ղուպով»։

Մի ուրիշ աւանդութիւն էլ կայ, որ ես լսել եմ դարձեալ յիշեալ տիկնոջից, այն է Թէ՝ պարսից շահը Սիմէօնի հօրը (գուցէ նորա Մելքիսեդեկ եղբօրը) անուանել է Խուբ-մելիք, որտեղից և որպէս Թէ ստացել է Խուբ-ով կամ Խուբեանց վերակոչումը։ Սակայն այնքան էլ հաւանական չէ Թւում մեզ այս աւանդութիւնը։

Այրի Խուբեանցի մեզ յանձնած փաստաբերերից գլխաւորը մի տոհմագրական աղիւսակ է, որ ճիւղագրական կարգով Սիմէօն կաթողիկոսի (Խուդաբաշխ) ազգաբանութիւնը հասցնում է մինչև Պռօշ իշխանը վերին ընԹացքով, իսկ դէպի վայր մինչև դարուս սկզբները։

Այս ճիւղագրութիւնը կազմուած է անշուշտ այն ժամանակ, երբ Գէորգ Խուբեանցը ռուս պետութիւնից խնդրում էր վաւերացնել իւր՝ իշխանական ցեղից սերուիլը, ինչպէս այդ ցոյց է տալիս Գէորգ (Եգոր) անուան ներքև գրուած «խնդրատու» բառը, ուրեմն դարուս սկզբներին. իսկ Թէ ինչ նախնական հիմունքների վերայ և ո՛ր աստիճան վաւերական փաստաԹղԹերի վկայութիւններով է կազմուած այդ աղիւսակը՝ դժուար է ստուգել։

Մի բան անվիճելի է Թւում մեզ, որ Սիմէօնը արդարև ազնուական տանից էր. այդ վկայում է նորա կենսագիր ոմն Մելքիսեդ բանասէրը, որ «Իսկութիւն բանի» վերնագրով մի գրքոյկի [3]) մէջ տուել է մեզ նորա կենսագրական քանի մի տեղեկութիւններ գովեստի ձևով, ուր Սիմէօնի ծագման մասին այսքանն է ասուած. «Հօգևոր տէրն մեր դիւցազնութիւն ունի և էն տանէ, և. և ազգն և տունն իւր յայտնի կայ ի յԵրևան քաղաքի, վասնորոյ ոչ է յաղքատ տանէ, և ի կարօտ ցեղէ, որ զինչ Աթոռոյն առ նոսա անցուցանէ»։ Իսկ յիշատակարանիս մէջ Սիմէօնի մասին ասուած է «սրբազան վեհս մեր գոլով վեհապետ և հայր հասարակաց, և ընդհանուր իշխօղ և կաթուղիկոս ազգիս հայոց, նա ինքն և մի ի հազարաց ազգին Հայոց...»։ Այսպէս նաև Յովհաննէս Կարբեցի կաթուղիկոսը վերը յիշատակած կոնդակում Կարապետ Ղուպովին անուանում է «ազնիւ» և «Ձերդ ազնիւ բարետոհմութիւն»։

Այն տոհմական աղիւսակը, որի մասին վերը յիշուեցաւ, մօտ եօԹն հարիւր տարուայ սահման ու տևողութիւն ունի. և իւր նախահայր ընդունում է Հաղբակեանց Պռօշ իշխանին, որ 12-դ դարում իշխում էր Գառնւոյ կողմերը և որ, ըստ մեր մատենագրաց և ծանօթ արձանագրութեանց, այլ և այլ մականուն էր կրում, որոնցից յայտնի են. «Հախպակայ», «Հաղբականաց» կամ «Հաղբականց», «Խաղբակայ», «Վարդանանց», «Շապունեաց երկրի տէր», «Խաչենոյ Հայկազն իշխան» և այլն։

Դժուար է ենԹադրել, որ այս տոհմական աղիւսակը կազմելիս շարայարողն ի նկատի չէ ունեցել գրաւոր որ և է

*) Տես «Արձագանք» № 17.

[1]) Описаніе достопамятныхъ произшествіи въ Арменіи, случившихся въ послѣднія тридцать лѣтъ, т. е. отъ патріаршества Семенова (1779 г.) до 1809 г. Соч. князя Егора Хубова, съ армянскаго перевелъ Архидіаконъ Іосифъ Іоаннесовъ. С.П.Б. тип. І. Іоаннесова. 1811 г.

[2]) Ս. Էջմիածնի մատենադարանում մի գրչագիր մատեան կայ «Երգարան երգեցիկ մանկանց և յորդորակ սիրահար դեռավարժից շարահիւսեալ ի ներգևեալ ոգի բազմաշխատ Գէորգ Մելքիսեդեկեան Խուբով իշխանէ, յեղբօրորդւոյ Տեառն Սիմէօնի մեծի ամենայն հայոց հայրապետի հանգուցելոյ 1825 ի Ղզլար» վերտառութեամբ որի «զեկուցումը» (Յառաջաբանը) ստորագրած է. «Գէորգ Մելքիսեդեկեան Խուբով Խուբեանց»,

[3]) «Ճառ գովութեան՝ գովելեաց կոչեցեալ իսկութիւն բանի։ Նախընտրաբար վասն սրբազան և իմաստուն Սիմէօն կաթուղիկոսին Պատրիարքական բարձր ԱԹոռոյն ամենայն հայոց՝ սրբոյ Էջմիածնի, և վասն Աբրահամ հատընտիր և անարգամեծար վարդապետին, և ապա՝ վասն այլոց ոմանց ազնիւ բարի և հաւատարիմ դիմաց՝ սակս փորձոյ ճանաչողութեանս մերոյ։ Արարեալ ի Մելքիսեդէ բանասիրէ ընդ հովանեաւ սրբոց հրեշտակապետաց եկեղեցւոյն որ ի մեծն Պօլիս։ Ի Թուին հայոց ռմժգ (1764) և ի նոյեմբերի յերրորդումն աւուր աւարտեալ»։—Վերստին գրեցաւ ի ծովահայեաց քաղաքն ի Զմիւռին ձեռամբ տէր Սողոմոն լեր աբեղայէ. ի Թուին 1215 (1766) օգոստ. 20։—Այս գրքոյկի մասին իւր ժամանակին իմանալով Սիմէօն կաթուղիկոսը, ինչպէս ասում է Յիշատակարանս, «համարեցաւ զնա անարգութիւն մեծ ինքեան և պակասութիւն մեծ անուան», վասնորոյ բազմաթիւ գրութիւններով անյապաղ պատուիրում է Կ. Պօլիս և այլ տեղեր, որ ուր էլ գտնուի այդ «Մելքիսեդ ոմն խենԹաբարոյ» ի գրուածքը՝ խպառ ոչնչացնեն և պատրիարքն էլ եկեղեցիներում ծանուցանէ «սաստիկ նզովիւք», որ եԹէ ով և իցէ օրինակած ունենայ այդ գրքից՝ երևացնէ և այդ ամենը ժողովելով՝ այրեն։ Գրում է նաև Մելքիսեդեկի հայր մահտեսի Յարութիւնին, որ իւր որդուն խրատէ և Թոյլ չտայ նորան այդ տեսակ բաներ գրել։—Բայց այս ամենը, մեր կարծիքով, հոգևորական համեստութեան արգասիք կարելի է համարել, որով պատշաճապէս զարդարուած էր Սիմէօնը, քանի որ Մելքիսեդի գրուածքը անպատուաբեր ոչինչ չէ պարունակում իւր մէջ Սիմէօն կաթողիկոսի, Աբրահամ Աստապատցու կամ այլոց վերաբերեալ, բացի գովեստից, որ մի փոքր չափազանցութեան է հասցրած.

ատեանները ֆիզիկական զարգացման վերաբերութեամբ պակասեցրած են առաջուայ համեմատութեամբ։ Բայց այս կարգադրութիւնը չպակասեցրեց անընդունակների թիւը։ Վերջ ի վերջոյ մեր զօրքը կազմում են այնպիսի երիտասարդները, որոնք իրենց ֆիզիկական զարգացմամբ շատ յետ են մնացել ֆրանսիական և գերմանական զօրքերից։ Այս տխուր երևոյթը անշուշտ սերտ կապ ունի այն հանգամանքի հետ, որ գիւղական բնակչութեան բարօրութիւնը հետզհետէ ընկնում է, սորա հետևանքն այն է, որ երիտասարդ սերունդը վատ է սննդվում և աննախանձելի առողջապահական պայմանների մէջ աճում»

*** Գ. Սուբոտինը պատմելով «Սեվերնի Վեստնիկ» ամսագրում իր ճանապարհորդութիւնը Վօլգայի վրայ մի շատ բնորոշ դէպք է առաջ բերում.

«Մի գիւղացու՝ մի ինչ որ յանցանքի համար դատարանը զրկել էր «բոլոր առանձին և ըստ վիճակի յատկացրած իրաւունքներից»։ Դատավճիռը արտասանելուց յետոյ նախագահը հարկ համարեց բացատրել մուժիկին՝ այս պատժի հետևանքները. «Քեզ չեն կարող այսուհետև ստարոստա ընտրել» (մուժիկը գլուխ է տալիս) և ոչ վկայ կոչել (գլուխ է տալիս) և ոչ երդուեալ դատաւոր հրաւիրել (գլուխ է տալիս և շնորհակալութիւն յայտնում). չեն կարող քեզ զինուոր առնել»։ Այս՝ բոլորը լսելով գիւղացին՝ ընկնում է դատաւորի ոտը և խնդրում. «չի լինել արդեօք որ իմ որդի Միկօլկին էլ նոյն այդ իրաւունքներից զրկել»։

ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

Կ. Պօլսոյ Թերթերից քաղում ենք հետևեալ տեղեկութիւնները.

ԱՐՄՏԻՔԻ ՆՈՒԱԶՈՒԹԻՒՆ. Յայտնի է թէ վերջին երկու տարիներու երաշտութեան պատճառաւ արմտիքի նուազութիւնն ինչքան տագնապալի հանգամանք մը առած է Կարինի նահանգին մէջ։ Ժողովուրդը մեծ դժուարութիւն կը կրէ իր ապրուստին անհրաժեշտ պարէնը հայթայթելու։ Կայսերական կառավարութիւնը այս տխուր կացութեան առաջին օրէն իսկ ամեն միջոցները ձեռք առած է դարման մը տանելու համար։ 70,000 քիլէ արմտիք պատրաստել տուած է, որուն 30,000ը արդէն Տրապիզոն ղրկուած է՝ Կարին փոխադրուելու համար։ Արդ, վեհ. սուլթանը, նկատելով որ ձմրան սաստկութիւնը ալ աւելի ծանրացուցած է արմտիքի նուազութենէն նեղուողներուն վիճակը, հրամայած է որ Տրապիզոն ղրկուած արմտիքը փութով Կարին փոխադրուի։ Գաւառական իշխանութիւնք պէտք է անյապաղ պատրաստեն փոխադրութեան միջոցները և առ այս հարկ եղած գրաստները գտնեն Տրապիզոնի գաւառակներէն։ Ն. Վեհափառութիւնը հրամայած է միանգամայն որ ժողովրդին նեղութիւնը թեթևցնելու համար մինչև հիմա ձեռք առնուած տնօրինութեանց մասին և ապագային այս օրինակ աղէտքի մը առաջքն առնելու համար գործադրուելիք միջոցներուն վրայ ճշգրիտ տեղեկութիւն տրուի իրեն։

Մուշի և Վանի մէկ քանի գաւառակներն ալ կը նեղուին արմտիքի նուազութենէն։ Վեհ. սուլթանին հրամանով, քննութիւն մը բացուած է ճշդիւ գիտնալու համար այդ գաւառակներու բնակիչներուն պէտքերը, փութով հարկ եղած նպաստը ղրկուելու համար իրենց։ Ներքին գործոց նախարարութիւնը արդէն տեղեկութիւն խնդրած է տեղական իշխանութիւններէն և ստանալուն պէս պիտի հաղորդէ վեհ. սուլթանին։

Վեհ. սուլթանը տեղեկանալով միանգամայն որ Կարինի մէջ տիրող թանկութեան պատճառաւ՝ շատ աղքատներ Տրապիզոն գաղթած են, անկարող իրենց ապրուստը ճարելու և օրապահիկի կարօտ, հրամայած է բնակութեան տեղ յատկացնել այդ գժբաղդներուն և հոգալ անոնց ապրուստը։

Սեբաստիոյ կուսակալութեան ալ հրաման զրկուեցաւ փութով արմտիք հասցնել ի Կարին։

—

ԽՆՈՒՍ. Այս տարուան երաշտութեան պատճառաւ, արմտեաց պակասութիւնը զգալի եղած է. Նախորդ տարիներ սօմարը 60—65 ղրուշի կը վաճառուէր, այժմ տարօրինակ կերպով բարձրացած է, թէև գնողներ 700—750 ղրուշ կուտան, բայց վաճառողներ հազուագիւտ են դարձած, և եթէ այսպէս տևէ՝ յառաջիկայ գարնան երկրագործները առանց ցանքի մնալէն զատ չպիտի կրնան իրենց ընտանեաց պարէնն ալ մինչև անգամ հայթայթել, որովհետև տեղւոյս ժողովուրդը վերջին ծայր չքաւորութեան դատապարտուած է. մինակ յոյսերնիս Աստուծոյ վրայ դրած ենք։

ԿԱՐՆՈՅ նահանգին համար Նիկոմիդիոյ նաւահանգիստը գտնուած 40,000 քիլէ ցորենի կէսը Մախսուսէի [illegible] շոգենաւով դէպի Տրապիզոն ճամբայ հանուած է և միւսն ալ Ճէրէք [illegible] շոգենաւով պիտի փոխադրուի։

ԽԱՐԲԵՐԴ ազատ է իր փողոցներուն մէջ վխտացող մուրացկաններէն։ Թաղապետութիւնը քննութիւնն մը բացեր է մուրացկանութեամբ ապրող մարդոց վիճակին վրայ. բոլոր անոնք որ խեղանդամ են և չեն կրնար իրենց ապրուստը հոգալ, ժողվուեր տեղաւորուեր են մասնաւոր տուներու մէջ, ուր պիտի ապրին թաղապետութեան ծախքով։ Միւս բոլոր մուրացկանները իրենց տեղեր ղրկուեր են։—Խարբերդի մէջ և շրջականերն ալ ձմեռը սաստիկ է. ջերմաչափը զերօէն 13 աստիճան վար եղած է։

ՊԱՐՏԻԶԱԿ—Գիւղիս երիտասարդներուն մէջ բաւական արթնցած է մարդասիրական և աղքատասիրութեան գաղափարը։ Խումբ մը երիտասարդներ կազմած են ընկերութիւն մը [illegible] անունով։ Ընկերութեան նպատակն է, ինչպէս անունը կը յայտնէ, օգնել գիւղիս աղքատներուն, որք գժբաղդաբար ստուար թիւ մը կը կազմեն։ Արդէն բաւական գործունէութիւն ցոյց տուած են, աղքատներուն դրամ, հաց և ածուխ բաժնած են, իսկ դպրոցի անկարող աշակերտներուն ոտքի ամաններ առած են։ Կոչում կ՚ընենք Պարտիզակցիներուն նիւթապէս և բարոյապէս աջակցիլ այս աշխատող երիտասարդներուն, մասնաւորապէս կը խնդրուի քահանայ հայրերէն և գիւղին մեծերէն, որպէսզի պահանջելի աջակցութիւնը չզլանան և օգնեն, ինչ որ ցարդ ըրած չեն։

Նաև առաջնորդ սրբազանի հրահանգով և երիտասարդներուն փափաքին համեմատ, գիւղիս մէջ գտնուած Եկեղեցասիրաց Ընկերութիւնը Գերեզմանատան ընկերութեան վերածուեցաւ։ Գիւղիս Վերի գերեզման կոչուած տեղը, ուր կը հանգչին մեր նախորդներուն ոսկորները, ասկէ քանի մը տարի առաջ կազմուած ընկերութիւն մը՝ [illegible] անունով, քարէ շրջափակ մը քաշած էր։ Այսօր նորակազմ ընկերութիւնը իրեն նպատակ ընտրած է բարձրացնել այդ պարիսպը, և բարեսէր ազգայնէ մը շնորհուած ջուրն ալ գերեզման տանիլ, ուր մեծապէս բղգալի եղած է աղբիւրի մը պէտքը։ Գերեզմաններն, որոնք երեսի վրայ ձգուած ոտքի կոխան կ՚ըլլան և թատր ամեն անհաճոյ վարմունքներուն, առաւելագոյն խնամքի արժանի են։ Բաց եկեղեցիներ են ասոնք, որ սրբավայրերու չափ նուիրական պիտի ըլլան և յարգուին ժողովրդին կողմէն։ Ուրեմն պէտք է մղում տալ այս նորահաստատ ընկերութեան, որպէսզի կարենայ գործադրել իրեն առաջադրած նպատակը և քաջալերելով զտած օգնութիւններէն, հոգալ հետըզհետէ գիւղին միւս պակասները։

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ մէջ և շրջականերն ալ ձիւնը աննկատ կը տեղայ։ Ցուրտը սաստիկ է. Էնկիւրիէն Տիարպէքիր տանող ճամբուն վրայ երկու կառապան և երեք ուղևոր գտնուած են ցրտէն սառած. Տիարպէքիրէն մեկնած սուրհանդակը մեծ դժուարութեամբ կրցած է Խարբերդ հասնիլ։

ԿԱՐԻՆԻ մէջ ուժգին ձմեռ կ՚ընէ։ Ցուրտը սաստիկ է և ջերմաչափը զերօէն 29 աստիճան վար իջած է։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ԴԱՎՐԻԺ, 6 փետրվար.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Ինչպէս անցեալ նամակովս հաղորդել էի յունվարի 24-ին, առաւօտեան ժամը 5-ին ըստ պարսից Ատրպատականի թեմակալ առաջնորդ Սրբազան Պարգեանցը ներկայացաւ Պարսից թագաժառանգին, իւր պալատի մէջ, հետն ունենալով իբրև թարգման հայազգի Դաւութ-խան Սեթխանեանին։ Սրբազան հօրը ներկայացրեց ըստ սովորութեան արարողապետ և արտաքին գործոց նախարարի օգնական [illegible]։ Սրբազան հայրը յտոնեկայս յանձնեց թագաժառանգին Վեհափառ կաթողիկոսէն բերած յանձնագրերը ճանաչելու Սրբազան Պարգեանցին առաջնորդ Ատրպատականի. այդ յանձնագրերը գրուած էին պարսկերէն լեզուով շատ գեղեցիկ և ստորագրուած Նորին Սրբութիւն Վեհափառ կաթողիկոսէն հայերէն և զմռուած կաթողիկոսական զմուռով։ Սրբազան հայրը խօսեց բերանացի, համառօտ կերպիւ բարեմաղթեց Վեհափառ Շահի արևշատութեան և կեանքի համար, որ միշտ մի առանձին սէր է տածում դէպի հայոց ազգը, որ գըտնուում են իւր հովանւոյ ներքև, օրհնեց նոյնպէս թագաժառանգին. այս խօսակցութիւնը իսկոյն թարգմանեց Դաւութ-խան Սեթխանեանը։ Թագաժառանգը խնդրեց իւր շնորհակալութիւնը մատուցանել հայոց կաթողիկոսին Սրբազան հօր առաջնորդ նշանակուելը Ատրպատականի համար։

Մի քառորդ ժամ մնալէ յետ Նորին Բարձր Սրբազնութիւնը մեկնեցաւ պալատէն և գնաց այցելութիւն ընդհանուր կուսակալ [illegible], որի մօտ կէս ժամ մնալէ յետոյ մեկնեցաւ Առաջնորդարան։

Սրբազան առաջնորդը արդէն ըսկսել է իւր վիճակի վերաբերեալ գործերով զբաղուել, հետզհետէ նամակներ են ստացվում գաւառների այլ և այլ կողմերէն զանազան խնդիրների մասին։ Չնայելով, որ Սրբազան հայրը բոլոր խնդիրներին պատասխանում է, բայց շատ մտահոգութիւն է պատճառում նրան այն հանգամանքը, որ Դավրէժի առաջնորդարանը չէ ունեցել մինչև օրս մի հայ-գրագիր կամ գործակատար, որ այլ և այլ խնդիրների համար կառավարութեան դուռը ուղարկուէր բերանացի առաջնորդարանի կողմից խօսելու, և բոլոր եղած հարցերը մի տումարի մէջ արձանագրուէին։ Մինչև Սրբազան Պարգեանցի Դավրէժ ժամանելը նախկին առաջնորդները ամենևին չեն մտածել այդ բաների համար, որ շատ կարիք կար, բայց կան այսօր խնդիրներ, որոնց վերաբերութեամբ Սրբազանը կամենում է է իմանալ գործի անցեալը, բայց իզուր որոնում է ազգային առաջնորդարանի արկղները և ոչինչ չէ գըտնում։ Եւ ահա ինքը ստիպուած է մի տոմարի մէջ գրել ամեն ինչ որ կատարվում է իրենց համարներով, մի մեծ աշխատանք Սրբազան Հօր համար մինչև որ մի յարմար գործակատար գտնուի ազգային առաջնորդարանի համար։ Նոյնպէս գաւառներում գործակալ քահանաներ չկան, մի հանգամանք, որ Սրբազան Հօր ևս քիչ մտահոգութիւն չէ պատճառում, որովհետև չէ գտնուում առաջնորդարանի մէջ մի որ և է ցուցակ, ուր գրուած լինէին գէթ անունները։ Պարտաւորուած Սրբազան հայրը գիմում այս ինչ կամ այն ինչ վաճառականին հարցնելու։ Ինչպէս լսում ենք և տեսնում Սրբազան հայրը այդ մասին մի մատեան է պատրաստելու, որ ամեն ինչ որ տեղի է ունենում ազգ. առաջնորդարանում, արձանագրուի և գաւառները գործակալ քահանաներ նշանակուին, բայց ցաւալին այն է, որ քահանաներ չունինք...

Քաղաքի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ երեսփոխ Յովակիմ աղա Ֆենէրճեանը, որ շատ անգամ ազգային հոգաբարձական ժողովների մէջ անդամ ընտրուած լինելով չէ խնայած իւր ձեռքէ եկած օգնութիւնները ըստ իւր կարողութեան ազգին մատուցանելու, իւր հրաժարականը ներկայացրեց սրբազան հօրը, որպէսզի մի ուրիշ երեսփոխ ընտրեն։ Պէտք է ի սրտէ խոստովանել, որ ահա երեք տարի է, որ յիշեալ պարոնը եկեղեցւոյ պայծառափայլութեան համար ամեն ճիգ թափում էր և կատարեալ կարգ ու կանոնի մէջ էր պահել։ Այսօր, ամսոյս 6-ին, ժողով է ազգային առաջնորդարանի մէջ երեսփոխանական խնդրի մասին, ուր հրաւիրուած են Առաջնորդ հօր կողմանէ. անշուշտ ժողովը չի ընդունիլ պարոն Ֆենէրճեանի հրաժարականը։

[illegible]։

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԹԱՏՐՈՆ, գրականական և թատերական հանդէս, № 1. Հրատարակիչ Ալ. [illegible]. Թիֆլիզ, տպար. Մ. Մարտիրոսեանցի և Ընկ.

Թիֆլիզում սկսուել է հրատարակուել մի վեցամսեայ նոր հանդէս, որի անունը լրիւ յառաջ է բերած յօդուածիս ճակատին։ Հրատարակիչը իւր հանդէսի նպատակը որոշում է այսպէս. «Թատրոնի» նպատակն է որոշ չափով զուարճութիւն պատճառել թատրոնասէր հասարակութեան, նպաստել հայ բեմական արուեստի և բեմական գրականութեան զարգացման»։ Արդարև բարի նպատակ, որի համար նոյն իսկ մի փոքր բան անելը մեզանում կարող է միայն քաջալերութեան արժանի լինել։ Բայց թող ներուի մեզ այստեղ մի բան հարցնել, որ կարծում ենք թէ ըընական է ամեն մի նոր ձեռնարկութեան սկզբնաւորութեան վերաբերմամբ. արդեօք հայ ընթերցող հասարակութիւնը բաւական չափով հետաքրքրութիւն ունի՞ դէպի էսթետիքական խնդիրները և ընդհանրապէս դէպի գեղարուեստը, որին ծառայելը «Թատրոնի» գոյութեան միակ իրաւունքն է։ Չենք կամենում չարագուշակ լինել, բայց ստիպուած ենք կարծելու, որ յատկապէս գեղարուեստին նուիրուած մի պարբերական հրատարակութիւն դժուար թէ կարողանայ իւր գոյութիւնը պահպանել մեզանում։ Նոյն իսկ «Թատրոնի» սոյն գրքի մէջ լոյս տեսած մի յօդուած—«Թատրոն, բեմ և լեզու»—մի տեսակ հաստատութիւն է մեր ենթադրութեան. եթէ «Թատրոնասէր» կոչուած հայ հասարակութիւնը գէթ մասամբ նման է պ. Ս. Հախումեանի նկարագրածին, ապա ուրեմն «Թատրոնը» դեռ ընթերցողներ շրջան պիտի ստեղծէ իւր համար, մի հանգամանք՝ որ անհրաժեշտ պայման է ամեն պարբերական հրատարակութեան համար։

Գ. Թարխանեանը յայտնում է, որ իւր հանդէսում տպագրուող երկերի մէջ «աւագագոյն տեղը անտարակոյս կը շնորհուի [illegible]» (ընդգծուած է բնագրի մէջ). «Թատրոնի սոյն գրքումն էլ մեր պատկառելի Գ. Բարխուդարեանի թարգմանութիւնները հայ գրականութեան «գոհարներ» են անուանուած։ Արդ ո՞ւմ չէ յայտնի, որ Բարխուդարեանի թարգմանած Շէքսպիրը, Շիլլէրը, Լեսսինգը գժբաղդաբար տարիների ընթացքում ծանրաբեռնում են գրավաճառանոցների դարակները, իսկ «Թատրոնում» նոցանից լաւ երկեր տպագրուելու են արդեօք։

Ցաւալի է, այո, մեր գրականութեան այս վիճակը, բայց այդ իրողութիւն է, որ պարտաւոր ենք խոստովանել. տայ Աստուած, որ այս նոր հանդէսն աւելի յաջողութիւն ունենայ, քան կարելի է յուսալ.

աղբիւր, որի վերայ հարկաւ հիմնած պիտի լինի իւր յօրինուածքը, սակայն չենք կարող ծածկել նաև մեր կասկածը, որ ուղղակի բղխում է այդ աղիւսակի ուսումնասիրութիւնից։ Անտեղի չէ ուրեմն, եթէ կանգ առնենք այս կէտի վերայ և մի փոքր երկարօրէն քննութեան ենթարկենք այս ճիւղագրական աղիւսակը։

Յայտնի է, որ Պռօշ իշխանի վախճանը տեղի ունեցաւ 1281—1289 թուերի ժամանակամիջոցում. 4) յիշեալ աղիւսակի մէջ Պռօշի որդի Վասակի թոռան որդույ ծնուած է համարւում «Խուդաբաշխը» (Սիմէոնը), որ եղաւ կաթողիկոս, որի ծնունդն ըստ Մելքիսեդ բանասիրի, որին իբրև ժամանակակից անձի ոչինչ պատճառ չունինք հաւատ չընծայելու, պէտք է հանդիպած լինի 1715 թուի մօտերքին։ Ուրեմն Պռօշի մահուան և Սիմէոնի ծննդեան մէջ առնուազն ընկնում է 426 տարուան ժամանակամիջոց. իսկ այդքան ժամանակուայ ընթացքում, որդեցորդի յաջորդում են միմեանց չորս հոգի, այն է, Վասակ, Խուդաբաշխ ա., Գրիգոր և Կարապետ, որի որդին էր Խուդաբաշխ բ. կամ Սիմէոն կաթողիկոսը։ Արդ՝ կարող էր Սիմէոնը Պռօշից սկսած հինգերորդ ծնունդը լինել։ Յայտնի է նաև, որ 1268 թուին Պռօշի որդի Վասակն արդէն ծնուած էր. համարենք թէ հէնց 1268 թուին էլ ծնուել է Վասակը. 1268 թուից մինչև 1715 թիւը 447 տարի է անցել, եթէ հաշուենք, որ Վասակը և նորա երեք յաջորդները մինչև Սիմէոնը՝ միջին թուով իւրաքանչիւրն իրանց հօր 50 տարեկան ժամանակն են ծնուել, այն ժամանակ Սիմէոնի ծնունդը կընկնի 1468 թուի մօտերքը, մի պատմական անհեթեթութիւն. և որքան էլ ըստ հաճոյս երկարաձգենք այդ չխնամեալ շրջանը, միևնոյն է մենք անկարող կըլինինք խզպառ բառնալ այդ անհեթեթութիւնը։

Աւելի ևս մերձ ազգակցական կապ կայ Պռօշի և նորա թոռան թոռն Սիմէոնի մէջ, որ ցոյց է տուած դարուս սկզբներում 50 տարեկան. ուրեմն մօտ չորս ու կէս դարում միմեանցից սերուած են միմիայն երեք հոգի, այսինքն իւրաքանչիւրին ապրեցրած են հարիւր յիսուն տարի և այդքան տարեկան նոքա դեռ որդիք են ծնում...։ Գրեթէ նոյնքան տարիների ժամանակամիջոցում կայ Պռօշի և նորա Պապաք որդու կողմից չորրորդ սերունդ՝ Աշտարակ գիւղի տէր Առաքել քահանայի մէջ, որ անցեալ դարումն էր ապրում։

Բացի դոցանից, Պռօշի որդի Ամիրհասանն այդ աղիւսակում անժառանգ է դուրս բերուած, մինչդեռ Ամիրհասանը, ինչպէս յետոյ կտեսնենք, որդիք ունէր և այն՝ ամբողջ մի սերունդ, որ անծանօթ չպիտի մնար տոհմային աղիւսակը կազմողներին։

Այս անհեթեթութիւններից ընթերցողը հեշտութեամբ կհամոզուի, որ այդ տոհմական աղիւսակը տակաւին չի կարելի որպէս զուտ պատմական յիշատակարան համարել և պէտք է երկուսից մէկն ընդունել, կամ այն կապը, որ դրած է Պռօշի որդիների և մնացեալ ստորին շառաւիղների մէջ, մի կարկատան է, որ աւելի հաւանական է, որին ապաւինել են դարուս սկզբում ազնուականութեան իղձով տոգորուող քանի մի ընտանիքներ, այն ժամանակները, երբ հայերը պարսից լուծը թօթափելով մտնում էին ռուսաց կայսերութեան հովանաւորութեան ներքոյ և պատուի ծարաւից ձգտում էին հայոց հին իշխանական ցեղերի արժանաւոր ժառանգորդներ ցոյց տալ իրենց՝ նորածանօթ պետութեան աչքին և վայելել այն արտօնութիւնները, որոնք շնորհւում էին իշխանական սերունդներին. կամ թէ աղիւսակը կազմողների աչքից փախած են կամ թերևս նոցա անծանօթ են եղած միջանկեալ անձնաւորութիւններ և այդ իրանց անյայտ անձնաւորութեանց տեղը դուրս ձգելով՝ անգիտակցօրէն մի որոշ աստիճան մերձեցել են իրենց նախահաւրն և այդպիսով հաւասարակշռութիւնը կորցնելով՝ իրենց ազգասունւեհ Պռօշ իշխանից սերուելը կասկածելի կացուցել յետնորդների աչքին։

Գէորգ կամ Եգոր Խուբեանից յետոյ երկրորդ փորձը պատկանում է պ. Պ. Պռօշեանին (ըստ պ. Ն. Քարամեանի տէր Առաքելեան 5), որ ցոյց տուաւ հասարակութեան թէ ինքը և իւր նախորդներն ևս սերուած են Պռօշ իշխանից. Նա իւր «Կուռածաղիկ» և «Հաճէն» անունով երկու վէպերի մէջ ևս ակնարկներ է անում Պռօշի իշխանազն լինելու և իւր ու իւրայնոց նորանից սերուած լինելու մասին և թէ Պռօշ իշխանը Պահլաւունի Գրիգոր Մանդիստրոսի եղբօրորդին էր։ Թէպէտև իւր այդ առարկութիւնը պ. Պռօշեանը պատմական մի անվիճելի փաստ է համարում, սակայն պէտք է ասել, որ դա լոկ մի ենթադրութիւն է որպէս հետևանք այն հանգամանքի, որ Պռօշ իշխանը մերձ յարաբերութեան մէջ էր Պահլաւունեանց ցեղի հետ։ Ստոյգն այն է, որ Պռօշը Գրիգոր Խաչենեցու եղբօրորդին էր և ոչ թէ Գրիգոր Մագիստրոս Պահլաւունու, ինչպէս մենք այդ իւր տեղը կը տեսնենք. 1)

Վերը յիշած աղիւսակի պատմական արժէքից զուրկ լինելը աւելի շօշափելի կացուցանելու համար՝ մեր պատմագիրների տուած տեղեկութիւններից, ծանօթ գրաւոր արձանագրութիւններից ու յիշատակարաններից, Հ. Ալիշանի «Այրարատ» մէջ գետեղուած համանման տոհմական աղիւսակի համեմատութեամբ կազմեցինք «Խաղբակեանց», «Վարդանանց» կամ «Խաչկազուն» անուանեալ տոհմի ճիւղագրութիւնը, որ ազգից էր նաև Պռօշ իշխանը։

Համեմատելով այս տոհմական աղիւսակը, որի ստուգութեան մասին ոչինչ տարակոյս լինել չէ կարող, Խուբեանց տան՝ իշխանական ծագումն ապացուցանելու համար կազմուած ճիւղագրութեան հետ, որ վերև առաջ բերինք, մենք այդ երկուսի մէջ մի շարք տարբերութիւններ և անհամաձայնութիւններ ենք գտնում, որոնք դարձեալ ստուեր են ձգում վերջինիս հարազատութեան ու վաւերականութեան վերայ։

Նախ՝ «Խուբեանց» աղիւսակի մէջ ցոյց է տուած որպէս թէ Խուբեան տոհմը սերուած է Պռօշի Վասակ որդուց, իսկ նորա Ամիրհասան որդին անժառանգ է համարուած, մինչդեռ մեր կազմած վաւերական ցուցակից ամենևին չէ երևում, որ Վասակը որդիք ու թոռներ ունեցած լինի, ընդհակառակն Խաղբակայ կամ Պռօշի հետագայ գրեթէ բոլոր սերունդները շառաւիղում են նորա Ամիրհասան որդուց։

Երկրորդ՝ մէկ կողմ թողնելով, որ «Խուբեանց» ճիւղագրութեան գրեթէ բոլոր անունները բացի Պռօշից և նորա երեք որդուց, համապատասխան չեն «պատմական ճիւղագրութեան» անուններին, առաջնի կազմողներին մինչև անգամ յայտնի չէ եղել, որ Պռօշը բացի յիշած երեք որդիներից՝ ուրիշ որդիք էլ ունէր։

Երրորդ՝ ճիւղագրութիւն կազմողներին ծանօթ չեն եղել նաև ժամանակով իրենց շատ մօտ անձինք, որոնք ԺԷ և ԺԸ դարերումն են ապրել և մանաւանդ նոցանից նշանաւորները, ինչպէս օրինակ Այրիվանից ս. Գեղարդայ յայտնի առաջնորդներ՝ Ստեփաննոս, Դաւիթ և միւս Դաւիթ եպիսկոպոսները, որոնցից վերջինս ԺԹ դարու սկզբին դեռ կենդանի էր...

Չորրորդ՝ պ. Պռօշեանը «Փորձ» ամսագրի 1880 թ. Փ համարում իւր «Հաճէն» վէպի մէջ ասում է, որ Խուբեան տոհմը սերուել է Խաչէնի գարմից. դա շատ տարօրինակ կարծիք է և ահա ինչու համար.—Խուբեան և Պռօշեան տները իրանց իշխանական ծագումը ձգտում են ապացուցանել վերոյիշեալ տոհմական աղիւսակով, ուր Խաչէնի հայր Ամիրհասանին անորդի են ցոյց տուել, ինչպէս ուրեմն կարող էին սերուել Խաչէնից, որի գոյութիւնը նոյն իսկ իրենք են ժխտում։

Այս բոլորից յետոյ մենք դժուարանում ենք որևէ մի կապ գտնել Պռօշի իշխանական տան և Խուբեանների ու արդի Պռօշեան - Տէր - Առաքելեանների գերդաստանների մէջ. վստահանում ենք կարծել, որ ոչինչ հիմք չկայ ստոյգ իրողութիւնների շարքը դասել այժմեան Խուբեանց կամ Պռօշեանց սերունդների՝ Խաչկազանց կամ Պռօշեցւոց տոհմից սերուած լինելը. առաջ բերած վկայութիւններն ու փաստերը այդ հետևանքի են հասցնում մեզ։ Միւս կողմից պէտք է ասենք, որ Սիմէոն կաթողիկոսի՝ իշխանական ծագումից լինելու գրաւոր վկայութիւնները ժխտել մենք իրաւունք չենք համարում մեզ և չնայելով, որ անկարող ենք այժմ ճշգիւ ստուգել, թէ արդարև իշխանական և յանուանէ ո՞ր իշխանական տանից էր նա, թերևս ժամանակը այնպիսի վկայութիւններ երևան բերէ, որոնք իրողութիւն համարեն այն թէ երջանկայիշատակ հայրապետ արդարև հայ իշխանական ծագումն ունէր։

ԳԻՒՏ ՔԱՀԱՆԱՅ ԱՂԱՆԵԱՆ

(Կը շարունակուի)։

4) Այրարատ. եր. 268 և այլն.

5) Մուրճ ամս. այլն. Армянскіе беллетристы I. Моск. 1893 стр. 28.

1) Այս գլուխը մենք կրճատել ենք, որովհետև լրագրի էջերը անյարմար են պատմական ճիւղագրութիւնը հրատարակելու համար։ Ամբողջութեամբ կհրատարակուի «Դիւան Հայոց պատմութեան» երրորդ գրքի մէջ, որ արդէն մամուլի տակ է և որի համար էլ պատրաստած է այս ամբողջ աշխատութիւնը։

միայն մենք ակամայ այս տխուր ենթադրութիւններն արինք թերթելով «Թատրոնի» առաջին գիրքը:

Պ. Թարխանեանի նոր հանդէսում ամենից շատ ուշադրութեան արժանի է Մոլիէրի «Սկապէնի արարքների» թարգմանութիւնը, որ պատկանում է պ. Յ. Լալայեանի գրչին: Այդ միակ նմուշն է «դասական հեղինակութիւնների», եթէ չհաշուենք Գեօթէի խրատները դերասանների համար: Ափսոս որ պ. Լալայեանի թարգմանութիւնը, ինչպէս նաև միւս յօդուածները, հեռու է տպագրական սխալներից զերծ լինելուց. այսպէս, օրինակ, քանի անգամ փոխանակ «գրող» բառի տպուած է «կրող» (գրողը տանի), և առհասարակ սրբագրութիւնը շատ անխնամ է կատարուած:

Հետաքրքրական են Պ. Պռօշեանի «Հայոց թատրոնի սկզբնաւորութիւնը Թիֆլիզում» և պ. Ս. Հախումեանի «Թատրոն, բեմ և լեզու» յօդուածները: Առաջինը հեղինակի անձնական յիշողութիւններն են, որոնց պատմական արժէքն որոշելը նկարագրած իրողութիւններին աւելի տեղեակ ու ականատես անձանց կը պատկանի: Զենք կարող միայն չընկատել, որ այդ յօդուածը շտապով գրի անցրած նկատողութիւնների տպաւորութիւն է անում, մինչդեռ ցանկալի էր աւելի մշակուած տեսնել հայ թատրոնի այդ հետաքրքրական շրջանի պատմութիւնը: Երևի այդ հապճեպով գրելու հետևանքը պէտք է համարել այնպիսի խորթ օտարաբանութիւնները, ինչպէս հետևեալն է. «գլխաւորապէս Ներսիսեան դպրոցի սաներին էնք պարտական հայոց թատրոնի գոյութեան և շարունակութեան յարատևութիւնը»: Ազգային վիպասանութեան ներկայացուցիչ, ժողովրդի հարազատ զաւակ Պռօշեանը իրաւունք չունի մաքուր հայախօսութեան թշնամիների ազդեցութեան տակ այդպիսի անհարազատ դարձուածներով ապականելու իւր գրիչը: Երբեմն էլ Պռօշեանցն այնպիսի նշանակութեամբ է գործածում բառերը, որ նոքա չունին և չեն կարող հասկանալի լինել, օր. «անհատ» բառը «հատը չունեցող» իմաստով:

Այս մի երկու նկատողութիւնն անել թելադրեց մեզ Պ. Պռօշեանցի յիշողութիւնների յաջորդ յօդուածը՝ «Թատրոն, բեմ և լեզու», ուր խօսւում է մայրենի լեզուի քաջ ուսումնասիրելու անհրաժեշտութեան մասին՝ դերասանների համար: Սակայն մեր լեզուն միայն դերասանները չեն աղաւաղում և չարչարում. այդ նահատակութեանը հայ լեզուն աւելի ենթարկուած է գրականութեան մէջ, և Պռօշեանի նման անձինք սեպուհ պարտականութիւն ունին ոչ միայն խուսափելու անհարազատ դարձուածներից, այլև նորելուկ ու անգրագէտ գրչակներին իբրև օրինակ հանդիսանալով՝ մայրենի լեզուի դէմ ձեռնարկած նոցա սանձարձակ արշաւանքի առաջն առնելու:

Պ. Ս. Հախումեանի յօդուածը կարդացւում է հետաքրքրութեամբ. ողբալով հայ մատենագրութեան արդի վիճակն ու գրական բարքուվարքը՝ պարոնը միանգամայն արդարացի գայրոյթով յարձակւում է ի մէջի այլոց պ. Պ. Ադայեանցի վերջին «պոռնկագրական» յօդուածների դէմ. կրակոտ լեզուով նկարագրում է հայկական թատրոնի համար աննպաստ հանգամանքները և իրաւունքով բաւականին տխուր եզրակացութիւններ է անում հայկական թատրոնի արդի վիճակի մասին:

Հանդէսի սոյն գրքում տպագրուած է նաև Փ. Օնէի (ոչ Օհնէ) «Դարբնապետ» կոմեդիան (Թարգ. Ս. Արծրունու), որի չլինելուց «Թատրոնը» ոչինչ կորուստ չէր ունենալ անշուշտ. թէ պիէսն ինքը չափազանց հեռու է «դասական» լինելուց և թէ թարգմանութիւնն է միանգամայն անվարժ գրչի ծնունդ: Այդ կողմից որքան աւելի բարձր է «Սկապէնը», որ Մոլիէրի լաւագոյն փարսերից մէկն է և շնորհալի թարգմանչի ձեռքով էլ թարգմանուած:

«Թատրոնի» արտաքինը խիստ վայելուչ է ըստ ամենայնի և արժէ 2 ռուբլի, որ թանգ չէ. առաջին գրքում զետեղուած է երկու պատկեր — մէկը՝ Թիֆլիզի առաջին դերասանական խմբի և միւսը՝ հանգուցեալ Գ. Միրզաեան դերասանի պատկերը, որի մի համառօտ կենսագրութիւնն էլ տպագրուած է հանդէսում:

Ցանկանում ենք յաջողութիւն և յարատևութիւն հայկական թատրոնին ծառայելու կոչուած այս առաջին հանդէսին:

Մ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱ. — Journal d'Orient-ի մէջ կարդում ենք թէ խոլերային համաճարակը, որ համարեա թէ դադարել էր Կ. Պօլսում, յանկարծ նոր ոյժով վերանորոգուել է: Ի հաստատութիւն այս տեղեկութեան «Նովոյէ Վրեմյա» լրագրի պաշտօնական բաժնում տպագրուած ենք տեսնում, որ յունվարի 23-ից մինչև 26-ը խոլերայով բռնուել են 15 մարդ:

ՍԵՐԲԻԱ. — Բելգրադից հասած տեղեկութիւնների համաձայն Ալէքսանդր թագաւորի՝ իւր մայր Նատալիա թագուհուց ստացած նամակը նախազգուշացնում է որդուն Միլանի կորստաբեր խորհուրդների դէմ: Այս նամակի մէջ թագուհին ասում է, որ Ռուսաստանում տագնապալի են համարում Օբրէնովիչների տան բաղդը և հարստութեան փրկութիւնը նկատում են այն բանի մէջ, որ Աղէքսանդր թագաւորը հաշտուի Օբրէնովիչների հետ և Միլանը Սերբիայից հեռանայ:

—

ՀՈՒՆԳԱՐԻԱ. — Նորերումս մաճառները արգելել են չեխերէնի գործածութիւնը Հունգարիայում: Ահա թէ ինչպէս է եղել այդ՝ «Narodni Noviny» թերթի ասելով. «Պեշտում գտնուող սլաւոնական մշակներ թւով 350 մարդ ժողովուել էին Բուդաևիչում խորհրդակցելու մշակների մի կոնգրէս կազմակերպելու մասին: Երբ նիստը բացուեցաւ, տէրութեան ներկայացուցիչը պահանջեց, որ նորան գրաւոր կերպով յայտնեն այն առարկութիւնները, որ մշակները մտադիր են ժողովին անելու: Որովհետև այս պահանջն անկարելի եղաւ կատարելու, ուստի տէրութեան ներկայացուցիչը չթոյլատրեց երրորդ կէտի քննութիւնը: Իսկ երբ առաջին կէտի քննութեան միջոցին, մշակները սկսեցին չեխերէն խօսել, տէրութեան ներկայացուցիչը յայտնեց, որ նա թոյլ չի տալիս օտար լեզուով խօսելը և ասաց թէ մշակները կարող են հունգարերէն, գերմաներէն կամ սլովեներէն խօսել, բայց միայն ոչ չեխերէն: Այս խօսքերը ժողովականների դայրոյթը յարուցին, նախագահը հանգստացնում էր աղմուկ հանողներին, դիմելով նոցա չեխերէն, բայց տէրութեան ներկայացուցիչը հարկ համարեց ցրել ժողովը, չթոյլատրելով «օտար» լեզուի գործածութիւնը Աւստրիայում: Մշակները հեռացան ժողովից չեխերէն երգեր երգելով:

—

ԱՆԳԼԻԱ. — «Pall Malle Gazette»-ը մի հետաքրքրական էտիւդ է տպել Լոնդոնի անիշխանականների մասին: Հեղինակը նկատում է, որ իզուր են կարծում անգլիացիք, թէ որովհետև Անգլիան այն միակ երկիրն է, ուր անիշխանականները ապաստանարան են գտնում, ուստի մենք չպէտք է երկիւղ կրենք անիշխանականների սխրագործութիւններից: Միացեալ-Նահանգներում էլ այդպէս էին մտածում, բայց ինչ դուրս եկաւ: 1886 թուին տրամվայների ծառայողների գործադուլի ժամանակ անիշխանականները միացան նոցա հետ և իրենց ռումբերով սպանեցին կամ վիրաւորեցին 70 մարդ: Վերջին 6 կամ 8 ամսուայ ընթացքում Լոնդոնը լցուել է ֆրանսիական անիշխանականներով: Լրագիրը կարծում է որ անգլիական կառավարութիւնը օր առաջ նպատակայարմար միջոցների պէտք է դիմէ իրեն անիշխանականներից ապահովելու:

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Փետրվարի 16-ից.

ՓԱՐԻԶ. — Դատարանը ցմահ դաժանակիր աշխատանքների դատապարտեց անիշխանական Մօրնոյին, որ սպանել էր ոստիկանութեան գործակալին այն միջոցին, երբ վերջինս ուզում էր ձերբակալել նորան դողութեան համար:

ԼՈՆԴՈՆ. — Այն լուրերը, որ Գլադստոնը կամենում է իր հրաժարականը տալ՝ աչքի լոյսի պակասելու պատճառով և պահանջ զգալով հանգիստ կեանք վայելելու, օր աւուր սաստկանում են: Ասում են որ լորդ Ռօզբերին է լինելու առաջին նախարարը: Ռէյտերի գործակալութեան այս առիթով ուղղած հարցին, Գլադստոնը պատասխանեց, որ այդ լուրերը հեղինակաւոր չեն:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Երէկ թոյն ընդունելով անձնասպանութիւն է գործել Վեաչեսլավ Գայդեբուրովը, որ խմբագրում էր «Նեդելիա» շաբաթաթերթը իր եղբօր մահուանից յետոյ և որ 15 տարի շարունակ աշխատակցել է այդ հանդէսին:

Այսօր նաւթային արդիւնաբերողների վերջին նիստում որոշուած է նաւթային մնացորդների համար տարիֆը իջեցնել:

ԲԵՌԼԻՆ. — Կապրիվին ասել է. «Առևտրական դաշնադրութիւն հաստատելով Ռուսաստանի հետ, Գերմանիան 10 տարի շարունակ խաղաղութիւն կը վայելէ. մնում է ուրախանալ որ Ռուսաստանը յօժարութիւն է յայտնել: Մաքսային պատերազմ շարունակելը սաստիկ վնասաբեր է Գերմանիային, դաշնադրութիւնը վընասներ չէ պատճառում. Ռուսաստանին այն տուեցին միայն, ինչ որ տուին Աւստրիային, դաշնադրութեան մերժելը կը խզէ այն կապերը, որոնք միացնում են Ռուսաստանը Գերմանիայի հետ: Բիսմարկը երկար ժամանակ ձգտում էր Ռուսաստանի հետ դաշնադրութիւն կապելու, յայտնելով, որ եթէ ոչ ինքը գէթ նորան փոխարէնողը կը կատարէ այդ և ահա այժմ նորան փոխարէնողը ձգտում է կատարել նորա աւանդը:

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւնների.

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային հ.

Դ. Գ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժամը ներքին, երեխայոց և կանանց հ.

Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՒԻՉ—11½—12½ ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—12½—1 ժ. կանանց հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի և մէզի ու սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ի. Ե. ՓՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի և քթի ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ.: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ.

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Նաւասարդեան:

ՓՈՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ ՎՐԱՑ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

—

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 7 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան:

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղևորվում է առաւօտեան 6 ժամին, գիշերում է Պասանաուր կայարանում, հասնում է Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 10-ին երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից ետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ 5 ժամին և առանց գիշերելու հասնում է Վլադիկավկազ հետևեալ օրը 9 ժամին երեկոյեան:

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան ժամը 7-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան:

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղարկվում է առաւօտեան ժամը 9-ին, գիշերում է Գուդաուր կայարանում, հասնումէ Թիֆլիզ հետևեալ օրը ժամը 9 ին երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամի 7-ին երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ ժամը 5-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ½ ժամին երեկոյեան:

ՌՈՒՍԱՑ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

—

Ամեն շաբաթ շոգենաւերի երթևեկութիւն Բաթումի, Օդեսայի և Կ. Պօլսի միջև:

Բաթումից ճանապարհ է գնում.

Շաբաթ օրերը (լոյս կիրակի գիշերուա 2 ժ.) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները:

Կիրակի օրերը, գիշերուայ ժամը 11½-ին, խուճապ ընթացքով Եալտայի և Սևաստոպոլի վրայով:

Երեքշաբթի օրերը (լոյս չորեքշաբթի գիշերուայ ժամը 2-ին) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները:

Հինգշաբթի օրերը ցերեկուայ ժամը 12-ին ուղիղ ընթացքով Նովորոսիյսկի և Կերչի վրայով:

Կ. Պօլիս երկու շաբաթը մէկ անգամ երեկոյեան ժամը 7-ին:

Բաթում է գալիս.

Ուրբաթ օրերը երեկոյեան, շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստների վրայով:

Ուրբաթ օրերը առաւօտեան, խուճապ ընթացքով Սևաստոպոլի վրայով:

Երկուշաբթի օրերը երեկոյեան շրջանառու ըմթացքով բոլոր նաւահանգիստների վրայով:

Չորեքշաբթի օրերը առաւօտեան ուղիղ ընթացքով Նովորոսիյսկի և Կերչի վրայով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ յայտնում է ի գիտութիւն Ընկերութեան անդամների, որ ամսիս 20-ին, կիրակի, երեկոյեան ժամը 7-ին, Դումայի դահլիճում, նշանակուած է ընդհանուր ժողով, որի պարագման առարկաները լինելու են. 1) Ընկերութեան 1894 թ. նախահաշուի քննութիւնը և հաստատութիւնը. 2) Ընդհանուր ժողովի նախագահի, քարտուղարի, խորհրդի անդամների և 3 փոխ-անդամների ընտրութիւնը. 3) վերստուգող յանձնաժողովի 3 անդամների ընտրութիւնը. 4) գրադարանական յանձնաժողովի 5 անդամների ընտրութիւնը, և 5) Ընկերութեան 15 անդամների առաջարկը՝ Կարսի և Երևանի նահանգների կարօտեալներին օգնութիւն հասցնելու համար:

Անդամները հրաւիրվում են նորոգել իրանց անդամակցութիւնը, դիմելով պ. Եփրեմ Տատուրեանի մագազինը:
(3—2)

ՄԵԾՈՒԼԻ ՏԵՍԻՑ ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
և ուղարկուեց բաժանորդներին

„ԹԱՏՐՈՆ"
ԳՐԱԿԱՆ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ
ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ . . . . Հրատարակիչ
ՍԿԱՊԷՆԻ ԱՐԱՐՔՆԵՐԸ, կոմ. Մոլիէռի, թարգմ. . . Յ. Լալայեան
ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆԻ ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ Թիֆլիզում . Պ. Պռօշեան
ԹԱՏՐՈՆ, ԲԵՄ և ԼԵԶՈՒ . . . . Ս. Հախումեան
ԳԷՈՐԳ ՄԻՐԱՂԵԱՆՑ . . . . Յիշողներից մէկը
ԿԱՆՈՆՆԵՐ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ համար, Գէօթէ. Թ. Հ. Ա.
ԹԱՏՐՈՆԻ ԼՈՒՍԱՏՈՒ ԱՍՏՂԵՐԸ, բեմ. պ. Փրէյնտի թ. Ս. և Z
ԹԱՏՐՈՆԻ ՔՐՈՆԻԿՈՆ՝ արտասահմանից . . . . Վ. Փափազեան
» » Պետերբուրգից . . . . . Թատերասէր
ՊԻԵՍՆԵՐ՝ «Միւս անգամ», մենախ. թարգմ. . . Ա. Թ.
ԲԱՆԱՍՏԵՂԾ ԿԱՏԱԿ, հեղինակութիւն . . . . . Փառնակէս
ԴԱՐԲՆԱՊԵՏ, կոմ. 4 գործ. Փ. Օհնէի, թարգմ. . . Ս. Արծրունի

Պատկերներ՝ I խումբը Գ. Միրզաեանց:

ԳԻՆՆ Է 2 ՌՈՒԲԼԻ

Հրատարակիչ՝ ԱՂԷՔՍԱՆԴՐ ԹԱՐԽԱՆԵԱՆ:

II-րդ ԳԻՐՔԸ լոյս կը տեսնէ, նոյն ծաւալով, նոյն ուղղութեամբ, առաջիկայ ապրիլին:

ԵՐԿՈՒ ԳՐՔԻ ԱՐԺԷՔՆ է 3 Ռ. (օտարաքաղաքացիների համար 3 ռ. 30 կ.)
Իւրաքանչիւր հատորը առանձին 2 ռ.: Վաճառվում է բացառապէս կենդրոնական գրավաճառանոցում և ինձ մօտ:

Դիմել հետևեալ հասցէով՝ Тифлисъ, Александру Тарханьянъ, կամ կենդրոնական գրավաճառանոց, или въ Центр. кн. торговлю.

5—2

ՊԱՀԵՍՏԻ ՀԵՌԱԽՕՍ № 77 ՎԱՃԱՌԱՆՈՑԻ ՀԵՌԱԽՕՍ № 64

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒՄ

Դեղավաճառական և քիմիական ապրանքներ:
Բնական հանքային ջրեր:
Արտօնութիւն ստացած դարմանելու միջոցներ:
Անուշահոտ և անուշաբոյր ապրանք:
Տնտեսութեան համար իրեղէններ:
Դեղավաճառական և գործարանական պաշարներ:
Ախտահանիչ միջոցներ:
Վիրաբուժական գործիքներ:
Ռետինից պատրաստուած իրեղէններ:
Լուսանկարչութեան վերաբերեալ գործիքներ:
Եթերային իւղեր, մրգերի հիւթեր և լիկէօրնի ու օղիների համար ներկեր:

Գլխաւոր պահեստ ամբողջ Կովկասի համար՝ Պետերբուրգի—քիմիական գործարանի, Մոսկվայի—«Բրոկարի և ընկ.», Վարշավայի—Ջուլերմերի, Մոսկվայի—Բօգլօ և ընկ., Ռիգայի—Միւլգենսի:

Միակ պահեստ Թիֆլիզի «Անդրկովկասեան Քիմիական Գործարանի»:

Գլխաւոր պահեստ ռուս-ամերիկական ռետինի իրեղէնաց պատրաստութեան Պետերբուրգում: (134—2)

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Օ. ԶԻԲԵՐՏԻ
(№ 7, Դվօրցովայա փողոց, տ. Սարաջեւ, № 7)
ՍՏԱՑՈՒԱԾ ԵՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

ԻՍԿԱԿԱՆ ՃԱՊՈՆԱԿԱՆ ՑԵՆՔԻ ԻՐԵՂԷՆՆԵՐ

ԱԼԲՈՄՆԵՐ, ԻՐԵՂԷՆՆԵՐ ՓՂՈՍԿՐԻՑ, ԿԱՇՈՒԻՑ ԵՒ ՄԵԼԽԻՕՐԻՑ
(150—16)

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳՐՔԵՐԸ

	Ռ.	Կ.
1) Շմիդտ, «Ֆրանկլին», 2 տպ. սակաւաթիւ	—	40
2) » «Վաշինգտօն», 2 տպ.	—	60
3) » «Հոմերի Իլիականը», պատկերներով	1	—
4) » «Հոմերի Ոդիսականը»	1	20
5) Սմայլս, «Բնաւորութիւն»	1	50
6) Ամիչիս, «Սիրտ»	1	—
7) » «Ապենինններից մինչև Անդէրը»	—	10
8) «Ռուստէմ և Զօհրաբ»	—	20
9) Շիլլեր, «Աւազակներ», ողբերգութիւն	—	50
10) Սմայլս, «Ինքնօգնութիւն»	1	50
11) Տօլստոյ, «Ռօբինզօն», փոքրերի համար	—	20
12) » «Կոլումբը», փոքրերի համար	—	15
13) Հայզէ, «Բէաթրիչէ», վէպիկ	—	30
14) » «Նօնցայի բերդը», վէպիկ	—	30
15) Շմիդտ, «Ռէյնեկէ աղուէսը»	—	60
16) Վոլտէր, «Հաւատարիմ Սավիտրին» *)	—	10

Ճանապարհածախսը թարգմանչի վրայ է: Վաճառվում են թարգմանչի մօտ՝ Тифлисъ, Садовая, Маріино-Анановское училище, և կենդրոնական գրավաճառանոցում:

*) Հրատարակութիւն «Թ. Հ. Գր. Հրատարակչ. Ընկերութեան»:

Дозволено цензурою. Тифлисъ, 17 Февраля 1894 года. Տպարան Յ. Մարտիրոսեանցի Типографія И. Мартиросіанца. на Орбел. ул., д. № 1—2